

ՔԱՆԱԲԵՐ

Հոգեւոր Արարչութեան Արարչութիւն ՀԱՄԱՐ
PANPÈRE REVUE MENSUELLE RELIGIEUSE ARMÉNIENNE

Journal des Eglises Evangéliques Arméniennes de France

7, Rue Papère, MARSEILLE

(Ժ. Տարի) ՅՈՒՆԻՍԿՐ 1934

(10^{me} Année) Janvier 1934

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական

Անգաւորն ու յաւիտենականը

Գ. Գ. Խ.

Հոգ. Կեանք

Ճամբայ շինողներ

Հարկաւոր եւ բաղձալի միութիւնը

Յիսուսի նայինք

Սողոմէն Սեդուր, աղի արձաններ

Հոգեկան ախտեր

Թարգ. Ն. Ս.

Թարգ. Ի. Յ. Աբրահամեան

Սամուէլ Պ.

Ա. Օ. Փափազեան

Կենաց ամեններէն

«Իմ վկաներս դուք էք, Կ'ըսէ Տէրը

Աստուծոյ դատաստանը

Փառք տալու պատճառ մը

Սերտողութիւն

«Ան որ գալու է»

Ս. Գրական ուսումնասիրութիւն

Յազա Իսկարիովտացի

Գ. Գ. Խայկեան


Մանկանց սիւնակ

Հաւաքոյն Ծնունդը

Զանազան լուրեր

Խուրքերէնը ունի 8 էջ ո՛րչ Թէ հայերէնին Թարգմանութիւնը այլ տարբեր թովանդակութեամբ: Այս պարագան գիւրութիւն կուտայ ու Խուրքերէն գիտցող մը անկէ ալ կրնայ օգտուիլ: Թուրքերէն մասի պատասխա-
նատու խմբագիրն է՝

ԻՎԱՆԲԵՐԻ յամար յողուած կրնան գրել անոնք միայն, որոնք գիտեն վերստին ծնունդն ու հոգևոր կեանքը և, անոր մէջ ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելեն Քրիստոսով :



— ԲԱԺՆԵԳԻՆՆ Է —

Réd. «PANPERE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN
7, Rue Papère
MARSEILLE (France)

Պրանսայէ գրամական առաքումներու համար մեր Compte Chèque Postal Է H. N. Ghazarossian, 182, 53 Marseille

Le Gérant : Mr. le PASTEUR KALTENBACH

ԲԱՆԲԵՐ

Արժնոցի՛ր դուն
որ կը քնանաս, ես
կանգնէ՛ մեռելնիւ-
րէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Եփես. Ե. 14

Ուրեմն ա՛լ վախճանք, որ յըլլայ թէ
Անոր հանգիստը մոռնելու խոստմունքէն որ մեզի մնացեր է,
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Եբր. Գ. 1

Քանզի ալ աս-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի ջուշանայ:

Եբր. Ժ. 37

Ժ. ՏԱՐԻ

ՅՈՒՆՈՒԱՐ 1954

ԹԻԻ 1

ԽՄԲԱԴՐԱԿԱՆ

ԱՆՑԱԻՈՐՆ ՈՒ ՅԱԻԻՏԵՆԱԿԱՆԸ

Ամէն մարմին խոտ է եւ մ'որդուն բոլոր փա-
ռաւորութիւնը՝ խոտի ծաղիկին պէս. խոտը կը չոր-
նայ ու անոր ծաղիկը կը թափթփի, բայց Տէրը ը
խօսքը յաւիտեան կը մնայ (Ա. Պետ. Ա. 24, 25):

Մինչեւ այս տողերը «Բանբեր»ի ընթերցող-
ներուն ձեռքը հասնի, զանգակները արդէն դու-
ժած պիտի ըլլան 1933րդ տարուան մահը: Նման
իր հազարաւոր եղբայրներուն՝ ան ալ ընկղմե-
ցաւ յաւիտեանականութեան գոգը եւ ի՛նչ արագ:
Որչա՛փ ճշմարիտ են Սաղմոսերգունի տողերը.
»Մեր տարիները ցնորքի մը պէս կ'անցնենք...
անոնք շուտով կ'անցնին ու մենք կը թռչինք»
(Սաղ. Դ. 9, 10):

Կը թռչինք դէպի անխուսափելի՛ն, դէպի
զերեզմա՛ն: Շիտակ է թէ այժմ գիտութիւնն ու
բժշկութեան արուեստը յաջողած են զինաթափ
ընել շատ մը հիւանդութիւններ, որոնք դեռ այս
դարուն սկիզբը մարդկութեան սարսափներն է-
ին: Շիտակ է թէ վերաբոյժ մը այս օրերուն իր
նշդրակը կը հասցնէ այն ներքին գործարաննե-
րուն, որոնց դպչիլը դեռ վերջին պատերազմէն
առաջ մահացու կը նկատուէր: Շիտակ է թէ հի-
մա մարդու միջին տարիքը մի քանի քաղաքա-
կիրթ նկատուած երկիրներու մէջ 55ի բարձրա-
ցած է: Այսու հանդերձ դեռ այսօր ալ ստիպ-
ուած ենք երգել կեանքի նոյն տխուր Սաղմոսը,
զոր երգած են մօտաւորաբար երկու հազարեակ
տարիներ առաջ Պետրոս Առաքեալ, եւ անկէ ալ
15 դար առաջ «Աստուծոյ մարդը» Մովսէս, և ո-
րուն վառիանդները կը գտնենք բոլոր ազգերու
դրականութեան մէջ ալ. — «Ամէն մարմին խոտի
պէս է, եւ մարդուն փառաւորութիւնը՝ խոտի
ծաղիկին պէս, խոտը կը չորնայ ու ծաղիկը կը

թափթփի» (Ա. Պետ. Ա. 24, բաղդ. Սաղ. Դ. 5, 6
ՃԳ. 15, Եսայ. Խ. 6-8):

Կարելի՞ է տարակուսիլ այս խօսքին ճշ-
մարտութեանը: Ո՞վ պատահ է թէ դեռ մէկ տա-
րի ալ պիտի ապրի: Ո՞ր լուրջ անձը՝ առտուն ողջ
առողջ տունէն դուրս ելլելու ատեն՝ կարող է ըս-
տուգապէս ըսել թէ մի քանի ժամ, այս մի քա-
նի բույս յետոյ հոն չպիտի վերադարձուի իբր
անկենդան դիակ մը՝ արիւնշուայ եւ ձեռքերն ու
ոտքերը ջարդուած: Այսօր սեւ հողը չի՞ ծածկեր
բազմաթիւ մարդիկ, որոնք դեռ երէկ իրենց ե-
րիտասարդական ոյժին ու կորովին եւ իրենց ի-
մացական բարձր կարողութեանց վրայ կը դո-
ռոզանային ու ոսկեղէն երազներու մէջ կ'օրոր-
ուէին, եւ թօշնած ու թափթփած չէ՞ն հազարա-
ւոր մանուկներ, որոնք դեռ տարի մը առաջ կա-
ղանդի սեղանը կը բոլորէին եւ իբր անուշաբոյր
ծաղիկներ իրենց ծնողքը կը հրճուեցնէին: Իրաւ-
ցուն է, «Ամէն մարմին խոտ է, եւ անոր բոլոր վա-
յելչութիւնը դաշտի ծաղիկին պէս է»:

Բայց այս՝ ճշմարտութիւն է ոչ միայն անհա-
տին, հապանաեւ ազգերուն համար: Եսայի մար-
դարէն վերոյիշեալ խօսքէն յետոյ կ'աւելցնէ,
«Իրաւցնէ ժողովուրդը խոտ է» (Եսայ. Խ. 68):
Արդարեւ յաւիտեանականութեան հետ բաղդատե-
լով միայն դաշտի ծաղիկի մը կեանքին երկա-
րութիւնը չունի՞ ազգի մը կեանքն ալ: Ո՛ւր են
այժմ երբեմնի անգուլթ Նինուէն, հպարտ Բա-
բելոնը, եւրոպական քաղաքակրթութեան պար-
ծանքը հանդիսացող հին Յոյները, աշխարհակալ
Հռովմայեցիները, եւն եւ այլն: Անոնց բոլորին
ալ փառքը չէ՞ թափթփած դաշտի ծաղիկին պէս:
Անոնք ամէնն ալ չէ՞ն անհետացած պատմու-
թեան բեմէն:

Նոյնը պիտի պատահի, ուշ կամ կանուխ, նաև ներկայիս ապրող թէ՛ փոքր ու հզորներու ոտքերուն տակ կոխկոտուող ազգերուն եւ թէ՛ իրենց մեծութեան ու փառաւորութեան վրայ ուռեցողներուն— Հիթլերի ցեղապաշտ ու ռազմաշունչ Գերմանիայէն սկսեալ մինչեւ Սթալինի կարմիր Ռուսիան: Անոնք ամէնն ալ անխտիր պիտի թօշնին ու չորնան, «կշիռքի մէջի մանր փոշիին պէս» պիտի անհետանան, երբ անոնց վրայ Տէրոջը հովը փչէ (Եսայ. Խ. 7, 15):

Ահա այս է ամէն կեանքի վախճանը, որչափ որ մենք մեր մարմնաւոր աչքերով կրնանք տեսնել: Եւ ի՞նչ ահռելի վախճան: Ի՞նչ կ'արժէ աշխատիլ ու քրտնիլ, յոգնիլ ու տառապիլ, քանի որ մահը պիտի գայ ու վերջ դնէ մեր բոլոր փառաւոր ակնկալութիւններուն եւ գեղեցիկ յոյսերուն:

Բայց զոհութիւն Աստուծոյ, Իր Յայտնութիւնը որոշ, մէկին եւ համոզկեր խօսքերով մեզի ցուցուցած է թէ բոլոր անցաւորութեան ետեւը կայ անփոփոխելի, յաւիտենական իրականութիւն մը, որ է Աստուած: Միայն Ան է Ալֆան եւ Օմեգան, յաւիտենականութեան Հայրը. Ան է Անսկիզբն ու Անվախճանը, եւ զոյութիւն ունի «լեռներուն ծնանելէն առաջ եւ երկրի ու աշխարհի ստեղծուելէն առաջ, յաւիտենից մինչեւ յաւիտեանս»:

Արդ, Իրեն նման անփոփոխ եւ յաւիտենական է նաեւ Իր Խօսքը, որ ուրիշ բան չէ, եթէ ոչ Ինքնայայտութիւնը Իր էութեան: Արդէն ծանօթ իրողութիւն մըն է թէ մարդու մը խօսքը կը կրէ իր յատկանիշը: Թագաւորի մը խօսքը արքայական զօրութիւն ունի, յեղեղակը՝ թոյլ եւ տարտամ: Կարճ, մեր արտայայտած խօսքերուն մէջ կը յայտնուի մեր անձնաւորութիւնը, ուղենք կամ ոչ. «ոճը մարդն իսկ է»:

Այս ճշմարիտ է նաեւ Աստուծոյ Խօսքին համար, որ կատարեալ յայտնութիւնն է Անոր խորհուրդին, կամքին ու էութեան եւ է Անոր նման կենդանի, ամենակարող, ստեղծագործ, անյեղլի ու յաւիտենական: Աստուած ներկայ է Իր խօսքին մէջ Իր կենդանութեամբը, արարչագործ զօրութեամբը, յաւիտենականութեամբը եւ փառքովը: Ահա այս է իմաստը Յովհաննէս Աւետարանչի խօսքերուն.—

«Սկիզբէն էր Բանը (Խօսքը) ու Բանը Աստուծոյ քով էր եւ Բանը Աստուած էր: Անիկա սկիզբէն Աստուծոյ քով էր: Ամէն բան Անով եղաւ եւ առանց Անոր բան մը չեղաւ ինչ որ եղաւ: Կեանքը Անով էր (Յովհ. Ա. 1-4):

Այս առումով միայն Քրիստոսն է Աստուծոյ անձնաւորեալ Խօսքը— Բանը, Որ կատարելապէս կը յայտնէ Անոր խորհուրդը, կամքը եւ ամբողջ էութիւնը: Ուստի կատարեալ Աստուած է եւ ուրիշ աստուածային յատկանիշներու հետ ունի նաեւ յաւիտենականութիւն — անսկիզբ եւ անվախճան է, քանզի կարելի չէ երեւակայել ժամանակ մը, երբ Աստուած զուրկ էր, կամ զուրկ պիտի մնայ զԻնքն յատկանշող Խօսքէն, Բանէն: Ստեղծագործութեան տեսն Անիկա Աստուծոյ քով ճարտարապետ էր եւ Իրմով եղաւ ամէն բան (բաղդ. Առակ. Ը. 22-30, Յովհ. Ա. 1-4):

Արդ, քանի որ Սուրբ Գրոց բոլոր խօսքերն ալ իբր ուղղակի կամ անուղղակի բովանդակութիւն ունին Յիսուս Քրիստոսը, անոնք ալ անձնաւորեալ ու մարմնաւորեալ Բանին նման յաւիտենական են: Անոնք զոյութիւն Հառին մարգարէներու եւ առաքեալներու օրով միայն, հապա Աստուծոյ քով էին սկիզբէն ի վեր, ստեղծագործութենէն առաջ եւ պիտի մնան նաեւ այն տեսն, երբ ամէն մարմին դաշտի ծաղիկին պէս թառամած ու թափթփած է. միայն մասնաւոր ժամանակի մը ու սերունդի մը համար ըստած չեն, հապա կը մնան թարմ ու զօրեղ: Ահա նշանակութիւնը Պետրոս առաքեալի խօսքին. — «Տէրոջը խօսքը յաւիտեան կը մնայ»: Ահա զաղտնիքը նաեւ այն իրողութեան թէ Սուրբ Գիրքը կը պահէ իր զոյութիւնը՝ հակառակ իր դէմ եղած բոլոր թշնամութեանց: Յաճախ մարդիկ անոր մահը գուշակած են, այո, նոյնիսկ թաղած են զայն՝ պաշտօնական արարողութեամբ. բայց նա խորհրդաւոր փիւնիկին նման դարձեալ յորութիւն առած է՝ աւելի հզօր եւ երիտասարդ քան թէ առաջ:

Սակայն մեզի ի՞նչ այս ամէնը: Ի՞նչ կարեւորութիւն ունի մեզի համար, երբ Աստուած, Իր մարմնացեալ Բանը մասնաւորաբար եւ Իր խօսքը ընդհանրապէս մշտագոյ են: Մեզի ալ բաժին մը կա՞յ այդ յաւիտենականութենէն:

Այո՛, Աստուծոյ խօսքին նման յաւիտեան պիտի ապրին նաեւ այն բոլոր մարդիկ, որոնք անոր միջոցաւ նորէն ծնած են: Լսենք, ի՞նչ կ'ըսէ Սուրբ Հոգիէն ներշնչեալ առաքեալը, «Սուրբ սրտով մէկգմէկ պինդ սիրեցէք, նորէն ծնած ըլլալով՝ ոչ թէ ապականացու սերմէն, հապա անապականացուէն, Աստուծոյ կենդանի ու յաւիտենական խօսքովը» (Ա. Պետ. Ա. 22, 23): Ուրեմն Աստուած Իր կենդանի ու յաւիտենական խօսքը իբր անապականացու սերմ մը ապականացու, մահկանացու հաւատացեալներու մէջ

դնելով մեզ նորէն ծնած է եւ իրեն նման անապականացու դարձուցած: Մեզ «անեղծ ու անարատ եւ անթափած ժառանգութիւնով» անմահ եւ յաւիտենական կեանքով օծուած է:

Առիկա անյեղի, անփոփոխելի ճշմարտութիւն մըն է՝ հաստատուած Աստուծոյ յաւիտենական խօսքով: Ատկէ զատ՝ ան որ Աստուծոյ Որդւոյն կը հաւատայ ու եղբայրները կը սիրէ, վեկայութիւնը իր մէջ ունի», գիտէ թէ մահէն կեանքի փոխուած է, Աստուած իրեն յաւիտենական կեանք տուած է եւ այդ կեանքը Անոր Որդւոյն՝ Բանին միջոցաւ է (բաղդ. Ա. Պետ. Ա. 22-23 Ա. Յովհ. Գ. 14, Ե. 10-12):

Այս պատճառաւ մենք պէտք չէ ափսոսանք որ անցեալ տարին արագ թաւալեցաւ եւ մեզ քայլ մը եւս մօտեցուց գերեզմանին. պէտք չէ սարսափինք որ կեանքը այնքան անստոյգ է եւ մէկ օրէն միւսը կրնան թափթփիլ անոր փառաւոր ծաղիկները — մեր առողջութիւնը, նիւթական բարւոք վիճակը, պատիւը, բարեկամները, զաւակներն ու ուրիշ սիրելիները եւն. եւ այլն, վասնզի «գիտենք որ եթէ մեր վրանի նման երկրաւոր տունը քակուի, շինուածք մը ունինք Աստուծոյ, անձեռագործ յաւիտենական տուն մը երկինքի մէջ»: Ուստի աներկիւղ եւ ուրախութեամբ զիմաւորենք Նոր Տարին. ան աւելի մօտ պիտի տանի մեզ մեր երկնաւոր Հօրը եւ մեր յաւիտենական ու փառաւոր բնակարաններուն:

Գ. Գ. Խ.

ՀՈՎ. ԿԵԱՆՔ

ՃԱՄԲԱՅ ՇԻՆՈՂՆԵՐ

(J. H. Jowett)

(Գոր Տարւոյ առթիւ)

Շիտակ ճամբաներ ընէք ձեր ստեղծումն, որ չըլլայ թէ ան որ կալ է՝ խտորի: Եբր. ԺԲ. 13

Խնամքով պատրաստուած ճամբայէ մը աւելի հիանալի բան կ'այ: Մանաւանդ ճամբայ մը որ ոեւէ բարձրութենէ չխորշելով իրարու կը միացնէ հեռաւոր վայրեր եւ հաղորդակցութեան ու առուտուրի միջոց կ'ըլլայ: Կը յիշեմ այսպէս ճամբայ մը Ալպեաններու վրայ, զոր դիւրութեամբ եւ կատակելով մաղցելու հաճոյքն ունեցայ: Միտքս կուգայ ուրիշ ճամբայ մը, որ Դադմատիոյ ծովեզերքէն սկսելով կը նուաճէ

ծովեզերքին ու Մոնթէնէկրոյի մէջտեղ բարձրացող վայրագ լեռները:

Հարէյս Պըքնէլ խիստ հետաքրքրուած էր ճամբաներով, որոնք միշտ յանկուցիչ ազդեցութիւն մը կը գործէին անոր վրայ: Կարելի է սըխալ պիտի չըլլար ըսել թէ անոր աստուածաբանութեան հանդէպ տածած սէրը կ'երկրորդուէր իր ճամբաներու հանդէպ տածած սիրովը միայն: Անոր խորհուրդները այս երկուքին շուրջը դառնալով՝ զանոնք կը միացնէին եւ զիրար մեկնաբանելու կը ծառայէին: Այս ու այն տեղը իրարու միացնող կամ իրեն նոր եղող երկրամասերու մէջէն անցնող ճամբաներ կը ծրագրէր շարունակ: Սակայն ասկէ շատ աւելին ալ կ'ընէր: Իր վսեմ խորհուրդներովը ու ազնիւ կեանքովը ճամբաներ կը շինէր: Առաջինն էր, քաջաբի, անխախտ, արկածախնդիր խորհուրդներ յղանալու եւ անոնց պահանջին համաձայն հերոսաբար սպրեւելու: Ամէն ով որ Պըքնէլի աշակերտած է, գիտէ թէ ան ի՞նչ հիանալի ճամբաներ կը բանար շփոթեցուցիչ ու դժուարին գետիններու վրայէն:

Մեզմէ ամէն մէկը ճամբաներ կը շինէ: Կըրնայ ըլլալ թէ շինելու նպատակ կամ դիտաւորութիւն չունինք երբեք ու բոլորովին անգիտակ ենք զանոնք շինելնուս, սակայն ասով իրողութիւնը չփոխուիր: Մեր գործունէութիւնը չենք կրնար դադրեցնել: Մեր ամէն մէկ քայլը հետք մը կը թողու նման անտառին մէջ տեսնուած արահետի մը: Ամէնքս ալ կրկին ու կրկին նոյն ճամբայէն կը քայլենք եւ այս կրկնումը ու նակութիւն դառնալով՝ արահետը լայն ու բաց պողոտայի մը կը վերածուի: Այո, ամէն օր եւ ամէն ժամ մենք ճամբաներ շինելով կ'զբաղինք: Արդ, ի՞նչ տեսակ ճամբաներ կը շինենք: Արդեօք մեր շինած ճամբաները վսեմ ու սուրբութիւն, ազնիւ եւ հաստատուն են: Ուղի՞ղ են թէ ծուռ: Աներկբայ յառա՞ջ կ'երթան, թէ մոլորելով կը շեղին ու անոնց հետեւողները կը խառուին վերջապէս բլուրի մը ստորատը կամ գաղտագողի, անել վայրեր հասնելով: Մեր շինած ճամբաները սուր գայլախագներով սալայատակուած անհարթ ու խորտուրտ են, թէ ամէն փուշ ու քար մէկդի դրուած՝ հարթ ու հուսասար: Ի՞նչպէս են մեր շինած ճամբաները:

Սակայն ինչո՞ւ այսքան ծանրանալ այս հարցման վրայ: Բանդի մեզի հետեւողներ կան, որ մեր շինած ճամբան պիտի գործածեն: Թեւեալ մեզի հետեւողը կաղ է, կամ քալելու մէջ խիստ տկար: Ուրեմն անհունօրէն կարեւոր է

գիտնալ թէ ի՞նչ տեսակ ճամբաներ կը շինենք: Մեզի հետեւողը թերեւս կազ է, ըսի, կազ կամ- քով ու ֆնպատակով, կազ ցանկութեամբ ու անձնագոյնութեան մէջ, կազ սիրով: Եւ թերեւս այդ կազ անհատը քու հարազատ որդիդ է որ քու ճամբաներուդ կը հետեւի: Ուրեմն ինչպէ՞ս կը շինես: Ճամբադ ապահով է սրտիդ եւ ընտա- նիքիդ համար: Ապահով է բոլոր քեզի հետե-ւողներուն համար: Արդեօք անոնք պիտի սայ- թաքի՞ն ու մոլորի՞ն քու ճամբուդ վրայ: Քեզի հետեւողները գիշերով ան ճամբորդներ պիտի ըլ- լան թէ ցորեկուն: Քու ճամբաներդ միութեան կ'առաջնորդեն թէ արշալոյսին: «Ձեր ոտքերուն շիտակ ճամբաներ ըրէք», քանզի ձեր ոտքերուն կից քալողներ կան: Խղճմտօրէն ուղիդ շինեցէք, առանց խնայելու ձեր ամենէն ազնիւ ջանքերը, որպէսզի կազը չխոտորի:

Օր մը ամերիկացիի մը հետ նիւ Եօրքի փո- ղոցներէն մէկին վրայէն կը քալէի, որ սոսկա- լի վիճակի մը մէջ կը գտնուէր: Երբ բարեկա- միս հարցուցի ասոր պատճառը՝ անիկա պատաս- խանեց, «Այս ճամբուն շինութեան մէջ գտնու- լելիքը՝ անոր շինութեան պատասխանատուութիւնը ստանձնող մարդուն զրպանին մէջ կը գտնուի»: Այն պատասխանատու անհատին նը- կարագրի աւրուածութիւնը փոխանցուած էր փողոցին: Այսպէս, մեր շինած ճամբաները չեն կրնար մեզ անհատականութենէն լաւ ըլլալ:

Թարգ. Ն. Մ.

ՀԱՐԿԱՒՈՐ ԵՒ ԲԱՂՁԱԼԻ ՄԻՈՒԹԻՒՆԸ

Ձեզի կ'աղաչեմ եղբայրներ, մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունովը, որ միեւնոյն խօսքը ունե- նաք ամէնք, ու երկպառակութիւններ չըլլան ձեր մէջ, հապա դուք մէկ միտքի ու մէկ խոր- հուրդի վրայ հաստատուած ըլլաք:

Ա. Կոր. Ա. 10

Ոչինչ այնքան վշտալի եւ այնքան աղիտա- բեր է, որքան քրիստոնեաներու եւ եղբայրնե- րու միջեւ եղած վէճերը եւ բաժանումները, ո- րոնք իրենց Տէրոջ հաւատարիմ ըլլալու համար համաձայնութեան եւ միութեան օրինակը տա- լու էին:

Միութիւնը որ գոյութիւն է եւ որ քրիստո- նէական սիրոյ պտուղն է, արդարեւ հարկաւոր եւ փափաքելի է: Իրականին մէջ Աստուծոյ բոլոր ճշմարիտ զաւակները զայն ունենալու փափա- քած են:

Ուստի ինչպէ՞ս կ'ըլլայ որ այդքան մը դժ- ուար է միանալ կամ միացած մնալ, քանզի տեսնուած է գործնականին մէջ որ այս յաճա- խակի քարոզուած եւ փնտռուած միութիւնը չէ իրականացած:

Կատարեալ միութիւնը իրականացնելու հա- մար լեցնելիք պայմաններ կան.— պէտք է կա- րենալ նոյն գետնի վրայ դրուիլ, ունենալ խոր- հուրդներու եւ զգացմանց որոշ միաբանութիւն մը:

Ոչ ոք կրնայ պնդել թէ, ամէն գնով եւ ոեւէ մէկին հետ միութիւնը կարելի եւ փափաքելի է: Այնպէս որ, միութեան բուռն պաշտպանները ե- ղողներ, կրնան նոյնիսկ իրենք արգելք հանդի- սանալ միութեան, եթէ չեն կենար այն զիրքին վրայ, ուր միայն միութիւնը կարելի է:

Նոյնպէս անոնք որ ընդհանրապէս նկատուած են որպէս միութեան յամառ հակառակորդները, կրնան զայն եռանդաւոր փափաքիլ եւ աշխա- տիլ զայն իրականացնելու, հաստատ պահելով այն սկզբունքները որոնք միայն կրնան զայն ի- րական ու ազդու ընել:

Տեսնենք թէ առաքեալին յորդորը որոշակի ի՞նչ կը նշանակէ եւ որո՞ւ ուղղուած է:

Ամենէն առաջ, եթէ Կորնթացւոց թուղթը կարդանք, կը նկատենք որ բաժանումները, ո- րոնց վրայ խօսուած է, անկէ յառաջ կուգայ որ ոմանք Պողոսեան եմ կ'ըսեն, ուրիշներ Ապօղոս- եան, ուրիշներ Կեփասեան, ուրիշներ Քրիստոս- եան: Առաքեալը իրաւունքով կը պարսաւէ այս կողմնակցութեան ոգին: Մարդոց պատճառաւ չէ որ պէտք է բաժնուիլ:

Բայց աւա՛ղ, մարդկային հոգին հակամէտ է մարդոց հետեւելու, փոխանակ նայելու միմիայն Աստուծոյ խօսքին եւ Յիսուս Քրիստոսի: Ինք- զինքնիս խոնարհեցնենք, որովհետեւ ամէնքս ալ այս մասին շատ թէ քիչ յանցաւոր ենք եւ ջա- նանք չնայիլ մարդուն, այլ միայն Աստուծոյ:

Կորնթացիները բաժնուած էին նաեւ ծիսային եւ արարողական հարցերու մասին: Թուլատը- ւած է այսինչ կերակուրներէն ուտել, մասնաւորապէս՝ կուռքերու զոհուածները: «Ամէն բան ին- ծի օրինաւոր է, բայց ոչ թէ ամէն բան օգտա- կար»: Թող ամէն մէկը իր մտքին մէջ լման համոզում մը ունենայ, սակայն չբաժնուինք այս երկրորդական հարցերու մասին: «Բայց զոյշ կե- ցէք, որ չըլլայ թէ այդ ձեր իշխանութիւնը տը- կարներուն դալթակողութիւն ըլլայ» Ա. Կոր. Ը. 9:

Վերջապէս կան բաժանումներ որ յառաջ կու- գան այս կեանքի բաներուն ընդդիմութիւննե- րէն: Երկրաւոր բարիքներու կապուիլը, արծա-

թասիրութիւնը, փառասիրութիւնը, ռիսկալու-
թիւնը, վրէժխնդրութեան եւ կռիւի ոգին կրնան
մեզ մեր եղբայրներէն բաժնել: Պէտք է խնամ-
քով հսկել որպէսզի այդպէս չըլլայ եւ միացած
մնալու ջանք ընել:

«Չարը ձեր մէջէն վերցուցէք» (Ա. Կոր. Ե. 13).
«Ձեզի գրեցի չխառնուիլ, այսինքն եթէ մէկը
եղբայր ըստեալ (ան կրնայ զինք եղբայր կոչել
եւ ուզել եկեղեցիին մէջ մնալ) կամ պոռնիկ ըլ-
լայ, կամ ազահ, կամ կոռուպտ, կամ նախա-
տող եւն» (Ա. Կոր. Ե. 11): Ուրիշ խոսքով կարգ
կանոն պէտք է:

Վերջապէս, նկատի առնենք որ Պօղոս իր խօս-
քերը կ'ուզէ անդամներուն եկեղեցիի մը, որ
իրմով հաստատուած է կանգուն հիմքով վրայ:
Կորնթացիները միեւնոյն հաւատքը ունէին: Ա-
նոնք առանց վերապահութեան ընդունած էին ի-
րենց քարոզուած Աւետարանը: Ըստա՞ծ այն չէ
թէ միացած լէտք է մնալ եղբայրներու հետ,
որոնք այս աւետարանին հիմնական ճշմարտու-
թիւնները պիտի մերժէին, որ է, «Քրիստոս Յի-
սուս աշխարհ եկաւ մեղաւորները փրկելու» (Ա.
Տիմ. Ա. 15), եւ «որ մեր յանցանքներուն համար
մատնուեցաւ եւ մեզ արգարացնելու համար յա-
րութիւն առաւ (Հռով. Գ. 25): Ըստա՞ծ այն չէ
թէ հաշտութեան հսկող վարուելու համար մէկ-
դի թողելու է «խաչին յիմարութիւնը»: «Ես
միտքս չգրի ձեր մէջ ուրիշ բան գիտնալ, բայց
միայն Յիսուս Քրիստոս ու զԱյն՝ խաչը ելած»
(Ա. Կոր. Բ. 2): Դուն անոնցմէ մէկդի կեցիր, ո-
րոնք աստուածապաշտութեան կերպարանքը ու-
նին, բայց անոր զօրութիւնը ուրացած են» (Ա.
Տիմ. Գ. 5):

Չգուշանանք խօսքերու վրայ վիճելէ, անպը-
տուզ վիճաբանութիւններէ, ըլլանք եղբայրասէր,
զիրար հասկցող, բարեսէր, բայց հաւատքին հի-
մքուն չզպչինք:

Կրնան ըլլալ սոստ առաքեալներ, որ կը քա-
րոզեն Պօղոսի քարոզածէն տարբեր Յիսուս մը,
տարբեր աւետարան մը, Մենք չենք կրնար ա-
նոնց հետ միաբանիլ եւ մէկ եկեղեցի մը կազ-
մել: Եթէ մէկը ձեր ընդունածէն ուրիշ աւետա-
րան քարոզելու ըլլայ ձեզի, նզովեալ ըլլայ»
(Գաղ. Ա. 9), կը համարձակի յայտարարել միե-
նոյն առաքեալը որ մեզ միացած մնալու կը հը-
րաւիրէ:

Արտաքին միութիւնը ոչինչ է եւ չկրնար տե-
ւել եթէ միեւնոյն հիման վրայ չհանգչիր: Այդ
հիմը Աստուծոյ խօսքն է, ընդունուած որպէս
բարձրագոյն հեղինակութիւն: Երբ քրիստոնեա-

ները բոլորը մէկ կը հպատակին Յիսուս Քրիս-
տոսի եւ առաքեալներուն յայտարարութեանց եւ
ջանք կ'ընեն Փրկչին հաւատարիմ ըլլալ՝ հա-
ւատքի եւ սիրոյ մէջ մնալով, այն ատեն, բայց
միայն այն ատեն անոնք կրնան միանալ մէկ
խորհուրդով եւ մէկ զգացումով:

Թարգ. Ի. Յ. ԱՐՐԱՀԱՄԵԱՆ

Սէնթ Էթիէն

ՅԻՍՈՒՍԻ ՆԱՅԻՆՔ

Երբ ջուրերէն անցնիս Ես քեզի հետ պիտի ըլ-
լամ, ու երբ գետերէն անցնիս, քեզ պիտի չկո-
խեն: Քանզի Ես քու Տէր Աստուծոյ, Իսրայէլի
Սուրբը, քու Փրկիչդ եմ: Եսայ. ԽԳ. 2, 3

Երբոր անցնիս ջուրերէ ցուրտ եւ խորունկ,
Երբ մութ է եւ չես տեսներ ոչ մէկ ափունք,
Երբ մանաւանդ ըմբոստ յորձանքն ահաւոր
կը զարնուի ցաւոտ կուրծքիդ վիրաւոր՝
Մի՛ վհատիր, քայլերդ երբեք չկասին,
Աչքերդ շեշտ թող նային միշտ Յիսուսին:

Երբ երկինքդ ծածկուի գորշ ամպերով,
Երբոր քամին խառնէ ջուրերը խրոփ...
Երբ մանաւանդ խաւարին մէջ ամէն լոյս
Մարի... ու դուն զգաս ինքզինքդ անյոյս՝
Մի՛ վհատիր, քայլերդ երբեք չկասին,
Աչքերդ շեշտ թող նային միշտ Յիսուսին:

Երբ տըկար ես եւ ոյժերդ քեզ թողուն,
Երբոր պակսի կեանքիդ աւիւնը բեղուն,
Երբ մանաւանդ ո՛չ հաց ունիս, ո՛չ զըբամ,
Ո՛չ ընտանիք, ո՛չ տուն, եւ ո՛չ բարեկամ՝
Մի՛ վհատիր, քայլերդ երբեք չկասին,
Աչքերդ շեշտ թող նային միշտ Յիսուսին:

Երբ շէն օրերդ անցնին ասուպի մ'հանդոյն,
Երբոր ցնդին երազներդ ոսկեգոյն,
Երբ մանաւանդ ճարահատ ես եւ մինակ
Փորձութեան խօլ հոսանքին դէմ անպարփակ՝
Մի՛ վհատիր, քայլերդ երբեք չկասին,
Աչքերդ շեշտ թող նային միշտ Յիսուսին:

Աչքերդ միշտ Տէր Յիսուսի թող նային,
Ձի նա է մեր Լոյսն ու ճամբան երկնային,
Ի՞նչ փոյթ քեզի, երբ ցուրտ ջուրերն են պղտոր,
Երբ խաւար կայ, ամպ եւ մրրիկ ահաւոր...
Չէ՞ որ Յիսուս որպէս Փրկիչ Պահապան՝
Ամենուրեք քեզի հետ է անբաժան:

ՍԱՄՈՒԷԼ Պ.

ՍՈՐՈՄԷՆ ... ՍԵԳՈՎՐ, ԱՂԻ ԱՐՁԱՆՆԵՐ

(ՎԵՐ. ՌՕՇԱ)

Հակառակ Աստուծոյ երկար համբերութեան՝ դաշտի քաղաքներու բնակիչները խստացան, մինչեւ որ Անոր բարկութիւնը բոլորեցեալ, որմէ յետոյ ա՛յլ ազատում չկար: Աստուած թէեւ ուղեց Ղովտի սիրոյն անոր փեսաներուն ալ իւր-նայեւ, բայց ասոնք իրենց ուղղուած փրկարար կոչը ծաղրեցին եւ քաղաքին պատիժին մէջ կորսուեցան: Հրեշտակները նոյնիսկ Ղովտը դժուարաւ համոզեցին Սողոմէ ելլելու, բռնի կերպով զայն իր կնոջմով եւ երկու աղջիկներով մէկտեղ քաղաքին դուրսիցէն դրին: Շատ չանցած Ղովտի կինը — որ վառնալէն ազատած կ'երեւէր — ետին նայեցաւ եւ աղի արձան եղաւ: Անկասկած եթէ մէկ մեղաւոր իսկ՝ ամէն վառնալէն ազատուելով փրկութեան նաւահանգիստը կը հասնի, անիկա «Իր փառաւոր շնորհքին գովութեանը համար է» (Եփս. Ա. 6):

Ղուկ. Իէ. 32էն հետեցնելով՝ Ղովտի կնոջ իր ետին նայելուն պատճառը, Սողոմի մէջ թողուցած իրենց դանձերը ըլլալ կը թուին: Անոր սիրտը իր ետին մնացած էր. միայն վախը ստիպած էր զայն դէպի աստուանի լեռը քանի մը քայլ նետել, բայց ամբիջապէս անոր աչքերը ետ Սողոմ դարձան, «Քանզի ձեր գանձը ուր որ է, սիրտերնիդ ալ հոն պիտի ըլլայ» (Մատթ. 2. 21): «Ոչ մէկը որ ձեռքը մաճին վրայ կը դնէ ու ետին կը նայի, Աստուծոյ Թաղաւորութեան յարմար է»:

..

Բազմաթիւ աղի արձաններ կը լեցնեն Սողոմէն Սեգովրի ճամբուն մէկ մասը: Աշխարհի սէրը պատճառ եղած է ընդհանրապէս այս քարացումներուն: Անոնք տխուր յիշատակարաններ են իրենց սիրտերովը Եգիպտոս դարձողներու հանդէպ Աստուծոյ դժգոհութեան: Այս անձերը իրենց վիճակին գիտակից անգամ չեն երեւիր: Անոնք աշխարհի ապականութենէն դուրս ելլելու համար քիչ մը քաշքշեցին ինքզինքնին, Կարգ մը քարոզներ կամ ընթերցումներ անոնց երեւակայութիւնը, խիղճը ու թերեւս անոնց սրտին քանի մը թելերը յուզեցին, բայց «չթափանցեցին մինչեւ շունչը ու ոգին եւ յոգեւածները ու ծուծը բաժնելու»: Անոնք ծանծաղ զգացում մը ունեցան իրենց հոգիի վառնալէն. յուզիչ քարոզներ, Աւետարանին սէջէն քաղցր կամ վեհ բան մը անոնց սրտին դրաւիչ երեւցաւ. Աւետարանը անոնց համար զեղեցիկ ու հրապուրիչ սիստեմ

մը կամ քիչ մըն ալ աւելի բան մը երեւցաւ, բայց երբեք «բոլոր հաւատացեալներու փրկութեան համար Աստուծոյ զօրութիւնը» չեղաւ ան (Հոով. Ա. 16): Անոնք ազդուեցան բայց չփոխուեցան: Իրենց կրած զգացումը կրցաւ դիմելու կորստեան քաղաքէն ոտքերով դուրս հանել՝ բայց սրտով Սողոմ մնացին եւ ուստի չկրցան մինչեւ ապաստանի լեռը հասնիլ: Անոնց մէջ կարելի է տեսնել թէ բնական մարդը, առանց սրտի նորոգութիւն ունենալու՝ մինչեւ ուր կրնայ յառաջանալ երեւութապէս հոգեւոր բաներու մէջ: Ճամբայ ելլելէ քանի մը տարի յետոյ զանոնք միշտ միեւնոյն տեղը կը գտնես. ճշմարտութիւնը լսող ու հաւնող, լսող ու միշտ լսող եւ միշտ լսել փափաքող: Քարոզիչներով ու քարոզներով պարծենալ սիրողներ, բայց ամէն անգամին սերմը քարերու ու փուշերու մէջ ընդունողներ. այդ արտերուն մէջ պտուղը երբեք չհասունանար. եթէ զանոնք Ղովտի կնոջ աղի արձան վիճակին բաղդատենք՝ այս թշուառ հոգիներուն համար կարելի էր ըսել թէ անոնք արձանացած են՝ եւ հոգեւոր կեանքի տեսակէտով անոնց սիրտերը կ'ընդունեցած են շարժելու եւ յառաջանալու կարողութիւնը:

Այս վիճակին մէջ գտնուող թշուառ անձերէն շատեր՝ զի ենք շրջապատող հոգեւոր հոսանքէն բշտելով է որ կը շարժին: Անոնք ուրիշ հաւատացեալներէ հոգեւոր կեանքը իբր իրենցը կ'առնեն: Ընտանեաց կամ սիրելիներու շրջանակին մէջ թերեւս կան անձեր, որոնք հոգեւոր արթնութիւն ունին եւ աշխարհէ ձեռք քաշած են ու նոր կեանք մը սկսած են ապրիլ: Եւ այս աղի-արձան քրիստոնեաները՝ ապաշխարած սիրելիներէ շրջապատուած ըլլալով՝ ինքզինքնին կերպով մը անոնց մէջ բանտարկուած կ'զգան ու չեն դիտեր թէ ինչպէս օձիքնին ազատեն: Անոնք Հափով մը այդ սիրելի անձանց խօսքերուն օրինակին եւ հոգեւոր կեանքի ազդեցութեանը ներքեւ են: Մնաց որ իրենք ալ ջղային կամ մըտային կամ սրտով բաւական զօրաւոր ազդեցութիւններ կրած ըլլալով՝ կը խորհին թէ իրենք ալ հոգեւոր եղած են, եւ թէ հոգեւոր շարժումին մասնակցելով կեղծաւորութիւն չեն ընել: Անոնք բարեգործ են, եկեղեցւոյ ծախսերուն առատօրէն կը մասնակցին: Անոնք քրիստոնեայի կերպեր, լեզու եւ սովորութիւններ ունին, բայց սիւրտը, ո՛հ սիրտը, աշխարհային մնացած է, նման այն քարին որ հեղեղէ մը գլորուելով կը քշուի, բայց միշտ քար կը մնայ, կամ կրակի մէջ կարմըրած քարի մը՝ որ վառած ածուխ կը կարծես

բայց կրակէն դուրս Բանաժիդ պէս իր տաքութիւնը կը կորսնցնէ եւ պաղ քար կը դառնայ:

Այսպիսի անձերու մէջ ապաշխարութեան պակասը ներքին հոգեւոր կեանքի բացակայութիւնը մատնող զանազան նշաններով կը տեսնուի. — Աստուծոյ թագաւորութեան արտաքին կէտերու մասին միշտ հաճոյքով խօսելու սովորութիւնը, օրինակ, բարեգործութիւններ, բարեգործ անձեր, քրիստոնեաներու միջև եղած զաղափարներու արբերութիւնները, եւն: Ասոր հետ մէկ տեղ՝ հոգեւոր ներքին փորձառութիւններ պատմող խօսակցութիւններէ չախորժիլ, ահաւասիկ մեռած ըլլալու նշան մը, փաստ մը թէ սիրտը երկինքի համար չտրոփեր: Առանձնական ազօթքի ժամերու փափաք չունենալ, ներքին սեռեակի մէջ Աստուծոյ խօսքը Աստուծոյ ակնարկին տակ եւ Սուրբ Հոգիին լուսով կարգալու, սերտելու, խոկալու եւ անանելու փափաք չունենալ, հապա միշտ արտաքին գործունէութեան, յուզման ու շարժման փափաքիլ, ահաւասիկ մեռած ըլլալու նշան մը՝ նոյնիսկ անոնց մօտ որոնք Սոգոմէ դուրս ելած կ'երեւին: Ասոնց աւելցնենք — իբր հոգեւոր մահուան չարագուշակ նշան մը — կարգ մը մեղսալից սովորութիւններ չձգելու յամառութիւնը, սովորութիւններ, որոնք թէեւ զայթակղեցուցիչ չեն երևիր, բայց նոյնիսկ աշխարհի մարդոց աչքին կը զարնեն: Հոգեւոր շարժման մը մասնակցելու համար անհրաժեշտ երեւցող կարգ մը արտաքին փոփոխութիւններ ընելէ յետոյ՝ անոնք հոգ կանգ կ'առնեն: Ոչ մէկ յառաջացում, ոչ մէկ հրաժարում աշխարհիկ հազուատներէ, կերութեամբ են: Չարախօսութիւն կ'ուզես, ունայն հետաքրքրութիւն, շոգոքորթութիւն, գովուելու փափաք, անոնց քով պակաս չէ: Արժաթսիրութիւն, հոգեր ու մտատանջութիւն, համբերութեան, սիրոյ եւ ուրիշները կրելու պակաս, անոնց քով շատ կը գտնուի: Անոնք արտաքինը քիչ մը փայլեցուցած են, փայլուչ ու չափաւոր աշխարհիկներ դարձած. բայց որովհետեւ ներքնապէս սրտով միշտ աշխարհիկ են, հոգ կը մնան եւ հոգ պիտի մնան, եթէ Աստուծոյ շնորհքին մէկ հարուածը չգայ: Եւ անոնց մէջ հրաշք մը ընելու զանոնք լուսաւորելով եւ փոխելով:

Ճշմարտութիւնը իր ամբողջութեամբ ըսելու եւ ամենուն արիւնէն անպարտ ըլլալու համար, պարտինք հոս մասնաշեղ մեռած ըլլալու վերջին նշան մ'ալ, ամենէն ցաւալին որ կը գտնուի՝ հոգեւոր շարժման արտաքինով միայն մասնակցող անձանց մօտ: Անոնք կը գրգռուին այն հո-

գեւորներուն դէմ որոնց ազդարարութիւնը կամ օրինակը ամենէն շատ կը յանդիմանէ իրենց խիղճը եւ կը դատապարտէ իրենց կրօնական աշխարհիկութիւնը: Անոնց ամենէն աւելի սիրած, գոված եւ ուրիշներէ աւելի վեր բարձրացուցած քրիստոնեաները որոնք են. անոնք որ իրենց մեղքերուն աչք գոցելով շատ զիւրութեամբ եղբայրակցութեան ձեռք կը կարկառեն իրենց: Եւ որ քրիստոնեաներուն վրայ ամենէն շատ խրատութեամբ, դառնութեամբ ու բարկութեամբ կը յարձակին. անոնց վրայ որոնք քարոզով ու կեանքով ամենէն աւելի կը գատուին աշխարհէ, ուրացումի կեանքը աւելի շատ կը քարոզեն, որոնք աւելի հաւատարիմ են (նաեւ) իրենց յանդիմանելու պարտականութեանը մէջ, աւելի խղճատօրէն կը քննեն հոգիները, եւ որոնց մօտ աւելի զգուար է իբր քրիստոնեայ անցնիլ՝ առանց ճշմարտապէս քրիստոնեայ ըլլալու: Այս աղի արձան քրիստոնեաներուն հոգեւոր վիճակին վրայով մեր կասկածները իրենց ըսել, զանոնք գզուշացնել, ամենադոյզն կերպով անոնց հաւատքին կասկածիլ, անոնց վէճքերուն դաշիլ եւ անոնց կռուքիւր իրենց ցուցնել, անոնց աչքին աններելի մեղք մը գործել կը նկատուի. եւ անոնք ասոր վրէժը կը լուծեն, եւ ինչպէ՞ս կը լուծեն: Իրենց խղճատանքը նեղը ձգող Աստուծոյ զաւակներուն թերութիւնները լրտեսելով, անոնց ձախորդութեանց վրայ չարամտօրէն ուրախանալով, անոնց պակասութիւններու մասին առանց սիրոյ խօսելով, եւ այս բաներէն օգուտ քաղելով որպէսզի իրենք իրենց արձանալին վիճակին մէջ մնան, պատրուակելով թէ զիրենք յանդիմանողները ուրիշներէ լաւ չեն: Նկատած էք թէ այս նոյն անձերը որոնք հոգեւորները կը դատեն իրենք շատ բարձրաձայն կը հռչակեն թէ զիրենք քննադատող հոգեւորները սիրոյ պակասը ունին: Անոնց անդադար յանկերզն է, «Մի դատէք»: Անոնց սկզբունքը հետեւեալն է, «Ինչպէս ամէն բանի մէջ, նաեւ հոգեւորութեան մէջ ալ չափազանցութիւնը փնտաւար է»: Ո՛հ, Աստուած ողորմի այսպիսի անձերու. անոնք հոգեւոր կեանքի պակասին հետ ունին նաեւ ճշմարտասիրութեան եւ ուղղամտութեան պակասը: Որոնք որ այսպիսի հոգեւորներ կը ճանչնան, թող Աստուծոյ Շնորհաց աթոռին առջեւ արցունք թափեն, «Թերեւս ներուի անոնց... վասնզի մաղձի դառնութեան եւ անօրէնութեան կապին մէջ կը գտնուին» (Գործ. Ը. 22, 23):

Միտքերնիս բերենք Ղովտի կինը:

Թարգ. Վ. Ս.

Խմբագրութիւնս

Ծննդեան եւ նոր տարուան ամսական օրերուն առթիւ Աստուածային շնորհաց առատ օրհնութիւնները կը մտղմէ «Բանբեր» ընտանիքին:

ՀՈԳԵԿԱՆ ԱԽՏԵՐ

Ե. ՀՊԱՐՏՈՒԹԻՒՆ. — Տիեզերքի մէջ առաջին անգամ երեւան դալով Սատանայի եւ իր հրեշտակներուն անկման պատճառ եղող ախտ մըն է եղեկ. ԻԸ. 17, Եսայ. ԺԴ. 13, 14:

Մարդուն փոխանցուեցաւ Սատանայէն, երբ դրախտի անմեղութեան կեանքը ապրող եւ Աստուծոյ փառքը եղող մարդը սատանայական խորհուրդին յօժարեցաւ Եսայ. ԺԴ. 13, 14: Աստուծոյ պէ՛ս ըլլալ... Ծնդ. Գ. 5:

Ժառանգական ախտ մըն է, ու բոլոր մարդկութիւնը անով վարակուած է, ոմանց մօտ բորբոքած վիճակի մէջ, իսկ ոմանց քով ծածկուած ու անյայտ, սակայն միշտ պատրաստ ինքզինքը յայտնելու եւ աւերներ գործելու: Անբուժելի ըլլալուն՝ միայն մահը կրնայ մեզ իր ձեռքէն ազատել: Անոնք՝ որոնք Քրիստոսով խաչեալ կեանքը կ'ապրին, ազատ են անոր աւերիչ ազդեցութենէն Գաղ. Բ. 20, Ե. 24:

Հիւանդութեան զլխաւոր ախտանշանները հետեւեալներն են, որոնցմով կրնանք ճանչնալ իր ներկայութիւնը եւ զգուշանալ.

ա. Հպարտը ինքզինքը կը հաւնի Առակ. ԻԶ. 12, Հռով. ԺԲ. 16:

բ. Հպարտը դիւագգայ է Առակ. ԻԸ. 25:

գ. Հպարտը ուրիշները կ'արհամարհէ ու կը նախատէ Երեմ. ԽԳ. 2. Առակ. ԻԱ. 24:

դ. Հպարտը անձին պարծենալով ուրիշները կը դատէ Ղուկ. ԺԸ. 11:

ե. Հպարտը կը փափաքի որ ամէն ոք իրեն մօտիկ ընէ ու իրմով հետաքրքրուի Բ. Թագ ԺԷ 23:

զ. Հպարտը իր սխալը ճանչնայ իսկ, Հկրնար գայն խոստովանիլ Ովս. Է. 10, Սաղ. Ժ. 4:

է. Հպարտը ճշմարտութեան առջեւ չխոնարհիւր Ա. Տիմ. Զ. 3-6:

ը. Հպարտը Քրիստոսի համար ծաղրուելէ, նա-

խատուելէ կը քաշուի եւ Աստուծոյ պատգամը տանելով Քրիստոսի համար վկայելէ կ'ամչնայ Բ. Տիմ. Ա. 8:

Մեղքի այս ցաւալի ախտը երբեմն կը յայտնուի Յիսուսի արիւնովը փրկուած եւ զօրաւոր կարծուած Աստուծոյ զաւակներուն մէջ ալ, այն առին «հոգեւոր հպարտութիւն» անունով կը յորջորջուի, անգարծներու հպարտութենէն աւելի վտանգաւոր եւ կործանիչ է. վերի յատկութիւնները ունի միայն թէ հոգեւոր դիմակի տակ Գ. Յովհ. 9, Ա. Տիմ. Գ. 6:

Հպարտութիւնը այս վերջին օրերու մէջ ամենէն շատ տարածուած ախտ մըն է Բ. Տիմ. Գ. 2:

Հիւանդը հետեւեալ ցաւալի վիճակներուն կ'ենթարկուի: Անարգանքի եւ նուաստութեան Առկ. ԺԱ. 2, Իթ. 23: Կործանութի եւ կոտորածի Առկ. ԺԶ. 18, ԺԸ. 12, Դան. Գ. 30-33:

Յիմարութեան նուալին զԱստուած անարգելու եւ բոլորովին կործանելու Դան. Ե. 22-30, Գործ. ԺԲ. 21-23:

Ինչպէս վերը յիշեցինք, անբուժելի ախտ մը ըլլալով, յարմար պատահութեամբ միշտ մեր մէջ ի յայտ կուգայ, սակայն կան միջոցներ որոնցմով կրնանք անոր աւերիչ ազդեցութենէն հեռու մընալ մինչեւ որ մարմինէն մերկանանք եւ կատարեալ փրկութեան հասնինք Հռով. Ը. 23:

Ա. Յիսուսի նայելով եւ անկէ սորվելով որ հեղ է եւ սրտով խոնարհ Մատթ. ԺԱ. 29:

Բ. Խաչեալ կեանք մը ապրիլ Մատթ. ԺԶ. 24, 25, Գաղ. Բ. 20:

Գ. Եթէ Տէրը մեզ խոնարհեցնելու համար խրատի գաւազանովը այցելէ, գոհութեամբ ընդունիլ խրատը եւ որքան ալ դժուար ըլլայ կրել զայն եւ անոր մէջ տեսնելով Աստուծոյ սէրը եւ շնորհքը՝ ուրախանալ Բ. Կոր. ԺԲ. 7:

Տէրը մեզ երբեմն ամենէն ծանր զրկանքներու, թշուառութեան եւ մարմնաւոր սկաբութիւններու կը մատնէ որպէսզի մեզ խոնարհութեան դպրոցին մէջ կրթէ եւ տիեզերքի կարգն ու կանոնը աւերելով Աստուծոյ տրամաւորին եւ մարդոց ու հրեշտակներուն կործանման պատճառ եղող հպարտութեան ձեռքէն մեզ ազատէ Եբր. ԺԲ. 6, Բ. Օրին. Ը. 14-17:

Դ. Երբ այս կործանիչ ախտին ունէ յատկանիշը մեր վրայ տեսնուի եւ կամ մեզի լուր որով, անմիջապէս խոստովանութեամբ խաչին վազել եւ խոնարհիլ Ա. Կոր. Ե. 2, Բ. Կոր. Է. 11:

Փօն տ'Օպէնսա

Ա. Օ. ՓԱՓԱՋԵԱՆ

ԿԵՆԱՅ ԱԾՈՒՆԵՐԷՆ

«ԻՄ ՎԿԱՆԵՐՍ ԴՈՒՔ ԷՔ Կ'ԸՍԷ ՏԷՐԸ»

Սպըրճըն կը պատմէ թէ անհաւատ բանախօս մը իր բանախօսութեան վախճանին ունկնդիրներուն ասպարէզ կարգաց իրեն հակառակ խօսիլ, պարծենալով թէ ինքը ամէն կերպ փաստերով պիտի կրնար հերքել քրիստոնէութեան արժէքը: Նա կ'սպասէր որ քանի մը կրակոտ հաւատացեալ երիտասարդներ սկսէին իրեն հետ վիճարանական հարցեր բանալ եւ ինքը առաջուրնէ պատրաստած էր զանոնք պապանձեցնելու: Փոխանակ ասոր՝ աղքատ ծեր կին մը, շատ խեղճ ու պարզ հագուած, թեւը կողով մը, ոտք ելաւ եւ դէպի բեմը յառաջացաւ: Հոն իր կողովը եւ հովանոցը վար դրաւ ու սկսաւ խօսիլ.— «Այս ուրբա՛ր թէ Յիսուս Քրիստոսէն աւելի լաւ նիւթի մը մասին լսելու ու չլսեցի: Հիմա ձեզի ըսեմ թէ իմ կրօնքս ինծի ինչեր ըրած է, ու յետոյ եթէ կրնաք՝ անկէ աւելի լաւ ճամբայ մը ցուցուցէք ինձ. եթէ ոչ, հոս կանչելով զիս խաբեցիք: 30 տարի առաջ այրի մնացի 40 մատաղ զաւակներով, իմ թշուառութեանս անգունդէն Տէր Յիսուս Քրիստոսի վստահեցայ: Նա զիս մխիթարեց եւ օգնեց ինծի 10 զաւակներս մեծցնելով պատուաւոր մարդիկ ընելու: Ձեզմէ ոչ ոք կրնայ հասկընալ թէ 40 զաւակներով այրի մնացած աղքատ կնոջ մը տարիներուն նեղութիւնները ինչեր կրնային ըլլալ. բայց Տէրը իր շնորհքը ամէն բանի բաւեցուց: Պատահեցաւ որ երբեմն տառապանքի հալոցին էն տաք տեղերէն անցնէի, բայց իմ ազօթքներս միշտ կը լսուէին երկնաւոր Հօրմէն՝ եւ ապատումը ամէն ատեն կը հասնէր: Կ'ուզեմ որ ասկէ աւելի լաւ բան մը ցուցնէք ինծի նման խեղճ կնոջ մը: Եղան օրեր երբ մենք ուտելու հաց չունէինք, բայց ամէն անգամին ալ Տէրովը նախախնամող ձեռքը հրաշալիօրէն կերակրեց մեզ: Անգամ մը ես մահուան աստիճան հիւանդացայ. սիրտս կը պայթէր խորհելով թէ արդէն հօրմէն գուրկ որբուկներս աշխարհի վրայ բոլորովին մինակ պիտի թողուի: Այդ վիճակին մէջ վստահ էի թէ Յիսուս իր սիրտն մէջ հաւատարիմ կը մնար. եւ այս վստահութիւնը իմ խեղճ հոգիս զօրացնող միակ ոյժն էր: Եւ դւրսէ կ'ըսէք թէ՛ բոլոր ասոնք պարապ բաներ են: Ձեր անհաւատական քարոզները կրնան անփորձ պատանիներու հաւատալի երեւնալ, բայց իմ 30 տարուայ փորձառութենէս յետոյ՝ զիտեմ

ու կը վկայեմ թէ կրօնքի մէջ իրականութիւն կայ: Աստուծոյ ինծի ըրածէն աւելի լաւ բան մը ցուցուցէք ինձ եթէ կրնաք, թէ ոչ երեք բէնսս պարապ տեղը առիք այս երեկոյ»:

Անհաւատ բանախօսը որ այսպիսի առարկողներու դէմ չէր պատրաստուած՝ յանկարծակիի եկած՝ ուզեց խուսափողական պատասխան մը տալ «Իրաւ որ խեղճ ծերուկ մայրիկը իր կրօնի ցընորքին մէջ այնքան երջանիկ կ'երեւէր՝ որ ինքը չէր ուզեր խաբուած ըլլալը ցուցնել անոր»: Ոչ, պատասխանեց կինը, այդպէսով չես կրնար խուսափիլ. ճշմարտութիւնը ճշմարտութիւն է, եւ քու խնդալդ ու ծաղրելդ չի կրնար զայն փոխել: Յիսուս Քրիստոս ինձ համար եղած է եւ ըրած է այն բոլոր բաները զորոնք պատմեցի: Ես չեմ կրնար հոս նստիլ ու թոյլ տալ որ զուն Յիսուսի դէմ խօսիս առանց գործնական փաստերու: Յուցոր Անուր ինձ համար ըրածէն աւելի լաւ բան մը եթէ կրնաս: Ես զԱՅՆ փորձած եմ ու զԱՅՆ ճշմարտաւ գտած: Դուն քու անհաւատութեանդ փաստը չունիս, իսկ ես իմ հաւատքիս փաստը ունիմ»:

Ահաւասիկ ինչ որ գործնական կրօնք, հոգեւոր ոյժ եւ անյաղթելի տրամաբանութիւն կը ներկայացնէ: Պատճառաբանութիւն մը որ կարելի չէ ժխտել: Աստուած փորձուած եւ հաւատարիմ գտնուած: Անոր սիրովը իսկապէս լեցուած սիրտ մը: Ահա այս է Աւետարանին ներքին, մեծ ապացոյցը եւ յայտնութիւնը: «Իմ վրէպներս դուք էք, կ'ըսէ Տէրը» Եսայ ԽԳ. 10):

ՓԱՌՔ ՏԱԼՈՒ ՊԱՏՃԱՌ ՄԸ

Անգամ մը մէկը Լօնտոնի Սուրբ Ղուկասու հիւանդանոցը կ'այցելէր. Հիւանդանոցի յիմարներէն մին իր թեւէն քաշեց եւ հարցուց,

«Պարոն, երբեք Աստուծոյ փառք մատուցած ես քեզի տուած խելքին համար»:

—Ո՛չ, պատասխանեց մարդը քիչ մը զարմացած:

«Ես ալ փառք չէի տուած» ըսաւ խեղճ հիւանդը, «եւ Աստուած խելքս բոլոր ինձմէ»:

ՍՍՏՈՒԾՈՅ ԴԱՏԱՍՏԱՆԸ

Արքեպիսկոպոս Լէյթօն երեկոյ մը Կլասկոյէն Տըպլէյն գացած պահուն ճամբան սաստիկ փութորիկի բռնուեցաւ: Երկու աւաղակներ կիրճի մը մէջ պահուած՝ ճամբորդներու կ'սպասէին՝ եմ՝ աւար մը յափշտակելու յուսով: Արքեպիս-

կոպոսին գալը տեսնելով՝ անոնցմէ մին ճամբուն մէջ տեղը երկնցաւ, մինչ միւսը ճամբորդին մօտենալով խնդրեց,

«Գերապայծառ հայր, խղճա մեր վրայ, ընկերս կայծակէն մեռաւ եւ ընտանիքը այրի ու զաւակները որք ու անտէր կը մնան:

Աստուածավախ մարդը թէ՛ խղճալով եւ թէ՛ տեղի ունեցածին վրայ սարսափած՝ քսակը հանեց եւ անոր յանձնեց: Մարդը խոնարհաբար շնորհակալութիւն յայտնեց եւ ընկերոջը վերադառնալով, «Նայէ, տե՛ս, կըտր գումար մը» ըսաւ, անոր թեւէն քաշելով: Բայց ո՛հ, սարսափ, անիկա իրաւցնէ մեռած էր:

«Ո՛հ, գերապայծառ, զոչեց աւագակը, «ընկերս իրաւցնէ մեռած է»: «Մա՛րդ», պատասխանեց եւ պիսկոպոսը, «վտանգաւոր բան է Աստուծոյ դատաստաններուն հետ խաղալ»:

ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

«ԱՆ ՈՐ ԳԱՆՈՒ Է»

(ԵԲՐ. Ժ. 37)

Կարգա Յայտ. Ա. զլուխը

Յայտ. Ա.

Համար 1. «Յիսուս Քրիստոսի յայտնութիւնը»: Յայտնութեան գիրքը ղէպքերու եւ տեսարաններու յայտնութենէն աւելի «Յիսուս Քրիստոսի» յայտնութիւնն է: Ուստի Յայտնութեան Գիրքը եւ անոր միջոցաւ Յիսուս Քրիստոսի երկրորդ գալուստն ու անոր յարակից բոլոր ղէպքերը կը հասկնան ոչ թէ ծոյլ հետաքրքիր ընթերցողներ, հապա անոնք որ «Անոր պատուէրները կը բռնեն ու կը պահեն», «(եւ այսպէսով) զԱյն կը սիրեն», «(եւ) Հօրմէն ու Որդիէն կը սիրուին», «(Յիսուս) Ինքզինքը անոնց կը յայտնէ» (Յովհ. Ժ. 21):

հ. 3. «Երանի՛ անոր որ կը կարգաւ, ու անոնց որ կը լսեն այս մարգարէութեան խօսքերը եւ կը պահեն: Եթէ խաչեալ Քրիստոս քեզի չէ յայտնած Ինքզինքը, փառաւորեալ Քրիստոսը բնաւ չեա կրնար ճանչնալ:

հ. 18. «Ես Ան եմ որ մեռայ եւ ահա կենդանի եմ յաւիտեանս յաւիտենից»: Յիսուս՝ այս տեսիլքը տեսնող Իր սիրեցեալ աշակերտին ըսել կ'ուզէ, «Յովհաննէս», չե՞ս յիշեր զԻս երբ Գողգոթայի խաչին վրայ դամուստ էի եւ խօսքս քեզի ուղղելով ըսի, Ահա քու մայրդ, ու յետոյ հոգիս

աւանդելով մեռայ» (Յովհ. Ժ. 27-30): Ես Ան եմ որ մեռայ, դուն ալ տեսար ու ճշմարիտ վերակալութիւնով վկայեցիր (Յովհ. Ժ. 33 եւ Յայտ. Ա. 2), ահաւասիկ, «Ես Ան եմ որ մեռայ», վասն զի քեզ սիրեցի ու Իմ արիւնովս քեզ քու մեղքերէդ լուացի», ուստի «մի վախնար» (հ. 17): Մի վախնար «Իմ ձայնէս» (հ. 12), որ «լեռները կը ցատկեցնէ, անապատը կը դողացնէ, եղնիկները կը ծնցնէ, հեթանոսները կը խռովեցնէ, թագաւորութիւնները կը շարժէ ու երկիրը կը հալեցնէ (Սաղ. Ի. 5), Իմ ձայնս, որուն առջեւ ամբարիշտը պիտի պապանձի (Մատթ. Ի. 12), նոյն այն ձայնս քեզի «խաղաղութիւն պիտի խօսի» (Սաղ. 26. 8), շնորհք եւ խաղաղութիւն ձեզի» (հ. 4):

1. Ան որ գալու է, Հաւատարիմ Վկան է» հ. 5: Եսայ. ԾԵ. 4— Ահա զԱնիկա ժողովուրդներուն վկայ... դրի:

Յովհ. Ժ. 37— Ես... ասոր համար աշխարհ եկած (եմ) որպէսզի ճշմարտութեան համար վերակայեմ:

Ա. Յովհ. Ե. 11— Եւ վկայութիւնը այս է, որ Աստուած մեզի յաւիտեանական կեանք տուաւ:

Յովհ. Գ. 33— Ան որ Անոր վկայութիւնը կ'ընդունի, կնքեց թէ Աստուած ճշմարիտ է:

2 Ան որ գալու է, «մեռելներուն անդրանիկն է» (հ. 5):

Գործ. Բ. 23, 24— ...փայտի վրայ զամելով սպաննեցիք, զոր Աստուած յարուց մահուան ցաւերը քակելով, քանդի հնար չէր որ Ինք անկէ բռնուի:

Փիլ. Գ. 8-11— Ճանչնալու... Անոր յարութեանը զօրութիւնը... որ լլլայ թէ մեռելներուն յարութեանը հասնիմ:

Ա. Կոր. ԺԵ. 23— Առաջին պտուղը Քրիստոս, ետքը Քրիստոսիները Իր գալու ատենը:

Յայտ. Ի. 6— Երանելի եւ սուրբ է ան որ առաջին յարութեանը մէջ բաժին ունի:

3. Ան որ գալու է, «երկրի թագաւորներուն իշխանն է» (հ. 5):

Սաղ. ՀԲ. 11— Ու բոլոր թագաւորները Անոր երկրպագութիւն պիտի ընեն, բոլոր ազգերը Անոր պիտի ծառայեն:

Յայտ. ԺԱ. 13— Ու երկինքի մէջ մեծ ձայներ եղան որ կ'ըսէին, աշխարհի թագաւորութիւնները մեր Տէրոջը ու Իր օծեալինը եղան, ու Ինք պիտի թագաւորէ յաւիտեանս յաւիտենից:

Յայտ. Ե. 10— Եւ մեզ մեր Աստուծոյն թագաւորներ ու քահանաներ ըրիր, ու երկրի վրայ պիտի թագաւորենք (նաեւ հ. 6):

Յայտ. Ի. 4— Եւ աթոռներ տեսայ ու նստան անոնց վրայ, եւ անոնց դատաւորութիւն տրուեցաւ... եւ ապրեցան ու Քրիստոսի հետ հազար տարի թագաւորեցին:

Ան որ գալու է, Ան է որ «Մեզ սիրեց» ու «մեզ Իր արիւնովը մեր մեղքերէն լուաց» եւ «մեզ թագաւորներ ու քահանաներ բրաւ Աստուծոյ ու Իր Հօրը» (հ. 5, 6):

Քրիստոսի մեզ սիրելուն համար Իր արիւնը թափելը

ա. Պատժական էր— Գաղ. Գ. 13, Բ. Կոր. Ե. 21:

բ. Փոխանորդական էր— Ղեւտ. Ա. 4, Եսայ. ԾԳ. 5, 6, Բ. Կոր. Ե. 21, Ա. Պետ. Բ. 24:

գ. Կամաւոր էր— Ծննդ. ԻԲ. 9, Յովհ. Ժ. 18:

դ. Փրկագործական էր— Գաղ. Գ. 13, Եփես. Ա. 7, Ա. Կոր. Զ. 20:

ե. Քաւչարար էր— Հռով. Գ. 25:

զ. Հաշտարար էր— Բ. Կոր. Ե. 18, 19 Կոր. Ա. 24, 22:

է. Կատարեալ, ազդեցիկ էր— Յովհ. ԺԲ. 32, 33, Հռով. Ե. 9, 10, Բ. Կոր. Ե. 21, Եփես. Բ. 13, Երբ. Թ. 11, 12, 26, Ժ. 10-17, Ա. Յովհ. Ա. 7, Յայտ. Ա. 5:

ը. Աստուածայայտնական էր— Յովհ. Գ. 16, Ա. Յովհ. Գ. 9, 10: (Սքաֆիլտ)

Ան որ գալու է, «փառաւորեալ Քրիստոսն է»:

հ. 13, Որդին Մարգոյ— Դան. Է. 13, Եղկ. Ա. 26

հ. 13, Պճրղնաւոր պատմութեան մը հազաւ— Դան. Է. 9, Ժ. 5: Յետոյ կը տեսնենք որ Քրիստոս երկինքի մէջ արիւնով ներկուած հանդերձ մը հազաւ է (Յայտ. ԺԹ. 13), մինչդեռ փրկեալները ճերմակ հանդերձներ (Յայտ. Է. 9, ԺԹ. 14):

հ. 13, Կուրծքին վրայ սակի զօտի մը կապած— Դան. Ժ. 5:

հ. 14, Գլուխը ու մազերը բուրդի պէս ճերմակ ու ձիւնի պէս— Դան. Է. 9:

հ. 14, Իր աչքերը կրակի բոցի պէս— բաղդ. Դան. Է. 9, 10, Ժ. 6:

հ. 15, Իր ոտքերը սակեպղնձի նման— Դան. Ժ. 6, Եղեկ. Ը. 2:

հ. 15, Իր ձայնը շատ ջուրերու ձայնին պէս— Դան. Ժ. 6, Եղեկ. Ա. 24, ԽԳ. 2:

հ. 16, Իր աջ ձեռքին մէջ հօթը աստղ— (հ. 20, այն հօթը աստղերը հօթը եկեղեցիներուն հրեշտակներն են). փառաւորեալ Քրիստոսի նըկարագրութեան այս կէտին համաձայնող համարներ չենք գտներ Հին Կտակարանին մէջ՝ հաւանաբար այն պատճառաւ որ ասիկա «եկեղեցի»ին վերաբերեալ կէտ մըն է, և «եկեղեցի»ին

խորհուրդը Հին Կտակարանի սուրբերէն ծածկըւած էր (Եփես. Գ. 1-12):

հ. 16, Իր բերնէն սրած երկբերան սուր մը կ'ելլէր— Եսայ. ԽԹ. 1, 2:

հ. 16, Իր երեսը արեւու պէս էր որ... Դան. Ժ. 6, Յոբ ԼԷ. 22, Դատ. Ե. 31:

«ԱՆ ԱՍԿԷ ՔԻՉ ՄԸ ԱՏԵՆԷՆ ԱՆ ՈՐ ԳԱՂՈՒ Է, ՊԻՏԻ ԳԱՅ ՈՒ ՊԻՏԻ ՉՈՒՇԱՆԱՅ» Երբ. Ժ. 37:

«ԱՄԷՆ, ԵԿՈՒՐ, ՏԷՐ ՅԻՍՈՒՍ» Յայտ. ԻԲ. 20: Վ. ՍԱՀԱԿԵԱՆ

Ս. ԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՅՈՒԴԱ ԻՍԿԱՐԻՈՎՏԱՅԻ

Ինչպէս Պետրոս եւ Յովհաննէս առաքեալներու մասին զրաւ ատեն պարզեցինք, Յիսուսի բոլոր աշակերտներն ալ իբր հարազատ զաւակները իրենց ազգին՝ Անկէ երկրաւոր ու մարմնաւոր մեծ բանէ: Կ'ակնկալէին: Կը սպասէին որ Մեսիան Իր առաջին յայտնութեան ատենն իսկ ձեռք առնէ Դաւիթի թագաւորութեան մականը, փշրէ Հռովմի ծանր լուծը, ազատագրէ Իսրայէլը եւ զայն աշխարհակալ պետութեան մը զիրքին բարձրացնէ: Կը սպասէին նաեւ որ իրենք այդ թագաւորութեան մէջ բարձր զիրքերու տիրանան: Զեքէղէոսի որդիները կը խնդրէին, «Շընորհէ մեզի որ նստինք մեզմէ մէկը աջ կողմդ և միւսը ձախ կողմդ» (Մարկ: Ժ. 35): Եւ միայն այն երկուքը չէին որ այդ բաղձանքը կը սնուցանէին իրենց կուրծքին տակ. միեւնոյն սակեղէն երազներով կ'օրօրուէին բոլոր առաքեալներն ալ:

Սակայն անոնց մէջ այդ երկրաւոր յոյսերը տիրող չհանդիսացան, ընդհակառակն հետզհետէ աւելի մեղմացան. քանզի անոնք նման Զաքարիայի, Սիմէոն ծերունիի եւ ուրիշ ճշմարտապէս բարեպաշտ Իսրայելացիներուն, Մեսիայէն ոչ թէ միայն աշխարհային բարիքներ կ'ակնկալէին, հապա մանաւանդ երկնային օրհնութիւններ, — իրենց մեղքերուն թողութիւնը, Իսրայէլի հոգեւոր վերանորոգութիւնը եւ փրկութեան յայտնութիւնը հեթանոսներուն համար (Ղուկ. Ա. 67-79, Բ. 30-32): Աշակերտեցան Անոր, վասնզի Անոր սրբութեան առջեւ սարսափեցան իրենց մեղքէն (Ղուկ. Ե. 8) ու լսեցին թէ Ան է Աստուծոյ Գառը Որ իրենց մեղքը կը վերցնէ (Յովհ. Ա. 35-42): Եւ իրենց երկրաւոր յոյսե-

րուն ցնդելէն ետքն ալ հոգիով կապուած մնացին Անոր, քանզի Անոր «յաւիտենական կեանքի խօսքերը» անոնց համար աւելի բարձր արժէք մը ունէին, քան թէ թագաւորական փառքը (Յովհ. 2. 67-70):

Բայց այդպէս չէր Յուդա Իսկարիովտացին, միակ առաքեալը, որ Հրէաստանէն, (Քարիսթէն Յեա. ԺԵ. 25) կը ծագէր: Փարիսեցիներուն եւ անոնց զօրաւոր ազդեցութեան տակ գտնուող հրէայ մեծամասնութեան նման ան ալ կը խորհէր թէ հոգեւոր փրկութեան համար բաւ է միայն օրէնքը կատարել ու Աբրահամի սերունդէն ըլլալ. այդ մասին Մեսիան ընելիք պիտի չունենար: Անոնց նման իրեն ալ անըմբռնելի էր խոնարհ, ծառայող եւ մարգոց մեղքերուն համար զոհուող Քրիստոս մը: Յենա՞ծ Յիսուսի երկրորդ զաւուստին հետ աննշուած ինչ ունեցող մարգարէական խոստումներուն, անոնց նման ինքն ալ կը սպասէր որ Քրիստոս Իր առաջին յայտնութեան ատենն իսկ հաստատէր աշխարհակալ պետութիւն մը, որուն ազդեցութիւնը մինչեւ երկրի ծայրերը պիտի տարածուէր եւ ուր Իսրայէլ պիտի իշխէր ողորուն հարստութեամբ, խաղաղութեամբ, փառքով ու յաւիտենական ուրախութեամբ եւ «ծծելով ազգերուն կաթը» (տես Եսայ. 4.): Կը սպասէր մանաւանդ որ ինքը, Յուդա, այդ երանաւէտ թագաւորութեան մէջ բազմէր առաջին աթոռներէն միոյն վրայ: Եւ իրաւունք չունէ՞ր այդպէս խորհելու, չէ՞ որ ինքն ունէր այնպիսի պարզեւեք, որոնցմէ զրկուած էին իր զաւիլիացի պարզօրի աշակերտակիցները: 25-՞ որ Յիսուս ալ. գնահատած էր իր արժանիքը եւ իրեն յանձնած հասարակաց քսակը:

Յուդա կը կարծէր թէ շատ շուտ պիտի իրականացուէին իր այդ փառասանչիկ երազները, մանաւանդ հացի հրաշքէն յետոյ, երբ անիկա պահ մը յոսաց թէ արդէն հնչած է երանաւէտ ժամը, պատրաստ է Յիսուսի թագը, Գալիլիացիներէ յօժար են զայն ընդունիլ իբր թագաւոր հրէից:

Բայց զարմանք, Յիսուս մերժեց թագը: Բոլոր աշակերտներն ալ յանկարծակիի եկան, կարծեա թէ երկինքէն վար ինկան տեսնելով իրենց օղակառոյց գղեակներուն զլուզումը: Անոնցմէ շատեր «ես զացին եւ ա՛լ Ի՛նչ են հետ չէին պըտըտեր»: Միայն Պետրոս, Զերեգէոսի սրգինիքը եւ միւս առաքեալները՝ հրապուրուած իրենց Վարդապետին կենաց խօսքերէն՝ եւ աստուածային կեանքէն՝ հաւատարիմ մնացին Անոր. քանի որ

անոնց համար հոգին առաւել էր քան թէ մարմինը եւ Քրիստոսի սէրն ու սրբութիւնը աւելի բարձր քան թէ աշխարհային փառքի դարձիները: Անոր գլխուն վրայ. անոնք հետզհետէ զրտան իրենց ներքին հաւասարակշռութիւնը եւ աւելի մեծ մտերմութեամբ կապուեցան Յիսուսի իրենց երկրաւոր յոյսերուն զրեթէ բոլորովին ցնդելէն ետքն ալ:

Սակայն Յուդա հոգեւոր իրականութիւններու համար իր աչքերը փակած էր. միայն երկրաւորը կը քաշէր զինքը. ուստի Յովհ. 2. գլխուն դէպքերէն ետքը այլեւս Յիսուսէն պայթակղած էր անբուժելիօրէն. իր սկզբնական ոգեւորութեան յաջորդած էր սոսկալի դառնութիւն մը հանդէպ Անոր որ քանդած էր իր ամենագեղեցիկ ակնկալութիւնը՝ մերժելով մեծիկան զահը (Տես Յովհ. 2):

Բայց Յուդա ասկէ ետքն ալ չբաժնուեցաւ Յիսուսէ, հապա դեռ Անոր քով մնաց: Անիկա չի թողուց որ իր սիրտը կակուղնայ Անոր համբերող, ներող ու ազգարարող սիրտն առջեւ, ընդհակառակն օրէ օր աւելի քարացուց ու ստորնացուց զայն: «Դարձաւ զձու՞ռ ու զոհ՞իկ, ջանաց զանձանակէն զողանալ (Յովհ. ԺԲ. 1-8), գոնէ հարստանալ այն Մարդուն քով, Որուն յարած էր այնքան մեծ յոյսերով, Ահա ասկէ կ'իմանանք թէ երկրաւոր բարձրասլաց յոյսերէն մինչեւ գոհիկ արծաթախրութիւն եւ ընչաքաղցութիւն միայն մէկ քայլ կայ»:

Այդ բարոյական ու հոգեւոր անկման վերջին աստուոր քային եղաւ մեր Տէրը՝ հանդէպ սոսկալի ատելութիւն մը, որ թէեւ շատոնց ծնած էր իր մէջ, բայց զինքը բոլորովին դերեց Բեթանիայի մէջ Յիսուսի օծումէն ետքը: Երբ նա այդ աթիւ պաշտպանեց Մարիամը Յուդայի յարձակումներուն դէմ, վերջինս այլեւս բոլորովին անձնատուր եղաւ Սատանային, որ արդէն շատոնց կը փոփառ իրեն՝ մասնելու իր Տէրը (բողոք. Մատթ. ԻԶ. 6-16, Յովհ. ԺԲ. 1-8, ԺԳ. 2), Կ'արժէ հոս մէջ բերել աստուածաբան Շլաթըրի մի քանի խօսքերը. —

«Անիկա (Յուդա) վրէժ կ'առնէ իր յուսախաբութեանը համար: Ինքը երջանկութիւն կը փնտռէր, բայց Յիսուս զինքը թշուառութեան մէջ ձգած է. պատիւ կը փնտռէր, բայց հիմա ստապուած էր խաչին նախատինքը կրել Անոր հետ: Երկինքի թագաւորութիւնը փնտռած էր ոչ թէ խաչը, երկինքի թագաւորութիւն մը որ իրեն հարստութիւն ու փառք պիտի բերէր, բայց հիմա զոհանալու էր Յիսուսի ազգատիկ սիրո»

վր: Ի՞նչ օգուտ ունէր իրեն համար Քրիստոս մը, որ ուրիշ բան չկրնար ընել, եթէ ոչ օծուիլ կընտմէ մը: Եթէ մեռնելու էր, պէտք էր մեռնէր իր աշակերտին միջոցաւ զոր Ինք խաբած էր: Ասելու թեան համապատասխան էր կշռուած խորամանկութիւնը, որով գործեց Յուդա մինչեւ վերջը: ...Յուդա կը մարտնչէր Յիսուսի հետ թէ իրենցմէ ո՞րը յաղթանակը պիտի տանէր. կռիւի ատեն շատ զգոյշ էր. իր տկար կողմը չէր ցուցներ. չէր ուզեր վրիպիլ. կը փափաքէր որ Անոր կործանման ատեն իր գործակցութիւնն ալ մէջ բերէր: Այսպէսով կ'ուզէր վրէժ առնել Յիսուսէն, որ պէտք է գիտնար թէ Յուդան ալ իր քրմահաճոյքին չծառայէր, ինչպէս ուրիշները:

«Սակայն ասիկա վրէժն էր ոչ թէ Յուդայի, հապա Սատանայի, քանի որ ասիկա չկրցաւ փրկուիլ Յիսուսի, կործանեց գոնէ Անոր աշակերտը: Ասիկա Յուդան սոսկալի օրինակ մը ըրաւ այն իրողութեան թէ մեղքը կը կուրցնէ. Յուդա չկրցաւ Յիսուսը տապալել, հապա ինքզինքը»:

Իր սատանայական բոլոր նենգամտութեամբ եւ թշնամութիւնով չկրցաւ ուրիշ բան մը ընել, հապա միայն զայն, որ ըլլալու էր Աստուծոյ տնօրէնութեամբ եւ Յիսուսի յօժարութեամբ: Ինչ որ ըրաւ, միայն ի փնաս իրեն ըրաւ. քայքայուեցաւ թէ հոգւով եւ թէ մարմնով: Պետրոս, Յովհաննէս եւ ուրիշներ կորսնցնելով իրենց անձը, գտան զայն, իսկ Յուդա գտնեմ ըսելով՝ կորսնցուց զայն:

Հազիւ հասած էր իր նպատակին, տեսաւ որ սխալած էր իր բոլոր նրբին ու զզուելի հաշիւներուն մէջ: Ինչ որ կը պատահի զրեթէ բոլոր ոճրագործներուն, պատահեցաւ նաեւ իրեն: Խիղճը, որ ոճիրէն առաջ կը քի ազդեցութեան տակ քնացած էր, արթնցաւ ու իր կեանքը դժոխքի մը վերածեց: Ուզեց ազատիլ անոր ահելի դատապարտութենէն՝ «Անիրաւութեան վարձքը» ետ վերադարձնելով եւ «Մեղայ որ անմեղ արիւն մատնեցի» ըսելով: Բայց շատ ուշ էր, այլեւս զինքը լքած էր այն փրկարար հաւատքը, որ մարդը ճշմարիտ զղջումի կ'առաջնորդէ, Յիսուսը կորսնցնելով՝ կորսնցուցած էր ամէն բան. — օրէնք, ճշմարտութիւն, շնորհք եւ զԱստուած: Կեանքը այլեւս ոեւէ արժէք չունէր իրեն համար, ուստի ինքն եզաւ իր դահիճը՝ խեղդելով ինքզինքը (Մատթ. ԻԷ. 3-40):

Եւ փրկարար հաւատքը լքած էր զայն, քանզի Յուդա կամաւ եւ գիտակցօրէն Սուրբ Հոգւոյն դէմ մեղանշած էր: Հազիւ սկսած էր դառնութիւնը իր մէջ՝ Յիսուս նշմարեց փոփոխութիւնը

եւ յանդիմանեց զինքը ըսելով՝ «Ես ձեզ տառնեղիւք չընտրեցի՞, եւ ձեզմէ ալ մէկը սատանայ է» (Յովհ. 2. 71): Նման յանդիմանութիւն մը Պետրոսը խոնարհեցուց ու աւելի կապեց Յիսուսի (տես Մատթ. ԺԶ. 24-24): Բայց Յուդա որ յայտնապէս հասկցաւ թէ վել ոյիշեալ խօսքը իրեն ուղղուած էր, ատկէ ետքը աւելի դառնացաւ Վրդապետին դէմ եւ սրտով աւելի հեռացաւ Անկէ՝ դիմագրելով Հոգւոյն ազդարարութեանց:

Այդ ամենուն տեղեակ ըլլալով հանդերձ Յիսուս պահեց Յուդան. օձը իր գրկին մէջ եւ չի դադարեցաւ զայն իր փնտրող ու քաղցր սիրոյն առարկան ընելէ եւ ոեւէ միջոց չխնայեց անոր փրկութեան համար. — մինչեւ վերջին օրն ալ անոր վստահեցաւ գանձանակը եւ զայն մասնակից ըրաւ այն բոլոր նիւթական ու հոգեւոր օրհնութիւններուն, զորս կը վայելէին միւս աշակերտները: Նոյնիսկ այն ժամուն, երբ Ինքը գիտէր թէ Սատանայ արդէն անոր մտքին մէջ զրեր էր զինքը մատնելու, լուաց անոր ոտքերը եւ կերաւ անոր հետ միեւնոյն պնակէն: Եւ այս ամէնը կ'ընէր Յիսուս այնքան մեծ ներդրումը տուած որ սիրով, որ մինչեւ վերջին ժամուն աշակերտներէն մէկն ալ չկրցաւ հասկընալ թէ ինչ կ'անցնէր կը դառնար:

Այս ամէնը միջոցներ էին Սուրբ Հոգւոյն ձեռքին մէջ՝ ազդելու Յուդայի վրայ եւ փշրելու անոր կարծրացած սիրտը: Սակայն ասիկա՞ հակառակ Անոր ազդեցութեան՝ որքան շատ սէր վայելեց այնքան աւելի խորը ընկղմեցաւ անձնասիրութեան, ատելութեան, վրէժխնդրութեան եւ նենգամտութեան, մինչեւ գործելու ամենէն ստորին ոճիրը: Ուստի Աստուծոյ Հոգին ալ բոլորովին լքեց զինքը, զրկեց ճշմարիտ ապաշխարութենէ եւ թողուց որ կորսուի հոգւով եւ մարմնով: Յուդա մեղանշած էր Սբ. Հոգւոյն դէմ եւ պէտք էր կրեր պատիժը: Սարսափելի բան է կենդանի Աստուծոյ ձեռքը իյնալը, Ասիկա մաշող կրակ է:

Սակայն զգուշանանք Յուդայի վրայ քար նետելէ. մեր մէջ ալ կը գտնուին զայն այդ ահռելի ոճիրին մղող մեղքին արմատները. — փառասիրութիւնը, արծաթսիրութիւնը եւ եւ Քրիստոսը մեր մարմնաւոր ու աշխարհային բաղձանքներու ծառայեցնելու հակամիտութիւնը: Միմիայն Քրիստոսի շնորհքն է որ մեզ կը պահէ նման անկումէ ու կործանումէ:

Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ

ՄԱՆԿԱՆՑ ՍԻՒՆԱԿ

ՀԱՆՈՒՅՆ ԾՆՈՒՆԴԸ

(Նմանողաբար)

(Շար. Նախուրդ Թիւէն)

— Ես վերարկու մը պիտի գնեմ, ըսաւ պատիկ ձօրճիկը:

— Լաւ, ես ալ զոյգ մը կօշիկներ, աւելցուց Կորքին. բայց զխաւովը, այդ ինչպէ՛ս հին էր և աղտոտ...:

— Ես ալ պլխարի մը կը գնեմ, ըսաւ աղախինը, որուն ամսաթուղակը հազիւ իր ծախսերուն կը բաւէր, որովհետեւ ամէն տարի մէկ երկու անգամ հայրենիքը դրամ կը զրկէր իր խեղճ մօրը:

Վերարկուին, պլխարկին և մուճակներուն հետ մէկտեղ, գնեցին նաեւ երեք գնդակներ, պատիկ պատիկ փողեր, քիչ մըն ալ շաքարեղէն եւ ընկոյզ, ու արագ խնդուլթիւնով վերադարձան ձրկնորսներու փողոցը, գաղտնազոյի տեղաւորեցին իրենց ընծաները եւ հեռացան: Օ՛հ, եթէ գիտնայինք թէ՛ ի՛նչ մեծ հաճոյք կայ ուրիշները ուրախացնելու մէջ... Այդ պատիկները երբեք, երբեք այնքան ուրախացած չէին իրենց կեանքին մէջ: Մինչեւ մահիճ մտնելին անգուսպ ուրախութեամբ կը ցատքէին անոնք, կ'երգէին, կը խօսէին կը պատմէին անվերջ... եւ նոյնիսկ այդ գիշեր Կորքին երազին մէջ տեսաւ որ ձրկնորսի պատիկները եկած էին շնորհակալութիւն յայտնելու, մէկը փունջ մը ծաղիկ, մէկալը երկու ռսկեձկնիկ բերած էր աման մը ջուրի մէջ, մէկ ուրիշը կ'ստիպէր զինք զաւ իրեն հետ ծովային պտոյտ մը ընել մեծ առաքաստանաւով, եւ դեռ ինչե՛ր: Յաջորդ առաւօտ նոյն երջանիկ խանդավառութիւնը շարունակուեցաւ մինչեւ իրիկուն: Այդ գիշեր, Տիկին Էմըրսըն բացառաբար հրաման տուած էր պատիկներուն արթուն մնալու մինչեւ ժամը 11, ինք ալ նստած ճրագլուսով ասեղնագործ կ'ընէր կլոր սեղանի մը շուրջ՝ ուր ժաղիկն կը պատմէր պատիկներուն Յիսուսի ծնունդին, մէկ-երկու առակներուն, հըրաշքներուն եւ խաչելութեան վրայ: Յանկարծ Տիկինը ձեռագործը ձգեց, ժաղիկն ալ պատմութիւնը ընդհատեց. ոտքի ձայներ կը լսուէին դուրսէն. տարօրինակ բան. ու երբ բոլորը դէպի դուռը դարձած էին այդ բոլորովին անակնկալ ոտքերու աղմուկէն՝ կանացի մեղմ, յստակ եւ թրթռուն ձայն մը աստիճանաբար սկսաւ բարձրանալ, «կ'երգեն», ըսաւ ժաղիկն, ու վազեց դուռը:

ու բանալու: Բարձրահասակ, սեւազգեստ կին մըն էր, երեք պատիկներով.

— Ո՞վ էք դուք, հարցուց ժաղիկն քաղցրութեամբ:

— Կարծեմ չենք սխալիր, մեր դրացուհին երէկ իրիկուն իրենց պատուհանէն ծովուն բացերը դիտած պահուն...:

— Ներս եկէք, ըսաւ Տիկին Էմըրսըն ոտքի ելլելով եւ դէպի դուռը յառաջանալով: Անծանօթ կինը ներս մտաւ պատիկներով ու շարունակեց, — այդ պահուն տեսած է ձեզ երկու պատիկներով միասին, երբ դուք մեր դրան առջեւ ձեր սիրալիր ընծաները կը տեղաւորէիք իմ պատիկներու համար: Այս գիշեր եկած եմ ձեզի իմ անկեղծ շնորհակալութիւնս յայտնելու բարիքի մը համար, որուն նմանը դեռ երբեք տեսած չէի, ու մանաւանդ այն արտասովոր ուրախութեան համար՝ որով ձեր գաւակները իմ որբ պատիկներս ուրախացուցին: Դուք զիս յուզելու չափ ուրախացուցիք Տիկին...: Կինը արցունքով ծանրացած աչքերը սրբելով՝ հրամայեց իր պատիկներուն երթալ շնորհակալութիւն յայտնել իրենց բարի նուիրատուներուն: Օ՛հ, այդ պահը այնքան լուրջ էր եւ հոգեցունց... երբ պատիկները կ'երթային անհամարձակ քայլերով իրենց հասակակից բարերարներուն ձեռքը սեղմելու, էն պատիկը՝ վեց տարու մանչ մը, վազեց աթոռակի մը մէջ կըծկըտած հիւանդկախ աղջնակը զրկեց ու պինդ պինդ սկսաւ համբուրել: Օ՛հ, օ՛հ, պատիկին այդ տաքուկ եւ անկեղծ համբոյրները Մարգարիտին անձնասիրութիւնը հալեցուցին: Անոր անպոկ և կարծր սիրաւ փշրուած էր, ու յուզուած կապոյտ աչքերէն՝ արցունքի խոշոր կաթիլներ ըսկընան թափիլ, եւ հեծկտուքով — բայց ես... ոչ... ոչինչ... չտուի ձեզի..., ապա հեկեկան ձայնով թոթովեց — Մայր, մայր... գան... գանձա... նակը տուր...:

Աղախինը որ աւելի մօտ էր՝ աղջնակին խնդրանքը անմիջապէս կատարեց: Մարգարիտ գանձանակը պարպեց իր գոգը. 75 տրախմի էր. հաւասարապէս բաժնեց այդ դրամը երեք պրզտիկներուն: Թէեւ խեղճ կինը ուզեց արգիլել պրզտիկները, բայց Տեկ. Էմըրսըն միջամտեց, քաջալերեց իր աղջիկը անոր ագնիւ գոհողութեան համար, և ստիպեց պատիկները որ ընդունին այդ ինքնաբուղիս ընծան:

Ձկնորս կինը ինքզինքը զսպելու ճիգով մը շարունակեց — երէկ, ճիշդ այն պահուն երբ դուք մեր դռնէն կ'անցնէիք, ես պատիկներուս հետ ծունկդիր կ'աղօթէի որ Տէրը զթայ գոնէ մնացած

աս երեք զաւակներուս որոնց հայրը 15 օր առաջ գինով վիճակի մէջ մեռած գտնուեցաւ փողոցը եւ որոնց պզտիկ քոյրը շաբաթ մը հազիւ կայ որ հողին յանձնեցինք... Կինը անպուսպ փղծկումով սկսաւ հեկեկալ: Տիկին իմբրսն ամբողջ մարմնով կը դողար, յուզումէն կուրծքը կ'ելեւէջէր, սիրտը՝ բոլորովին նսր եւ արտասովոր կարեկցութեամբ մը կը տրոփէր... աչքերը լեցուեցան, կարծես վայրկեանական յեղաշրջում մը տեղի ունեցաւ իր ներսիդին: Այդ խեղճ կնոջ արցունքին եւ անկեղծ վկայութեան միջոցով Աստուծոյ Հոգին թափանցած էր անոր հոգւոյն ամենախորունկ տեղերը, այնպէս որ զուրգուրանքով թեւերը լայն բացած գրկեց սգաւոր կինը ու հարազատ քրոջ մը պէս պինդ սեղմած կուրծքին համուրեց զանիկա, — Դուն, ով քոր, սկսաւ հեծկտուքով արտաբերել, դուն այսքան ծանր ու տխուր վայրկեաններու մէջ դեռ կը հաւատաս դեռ կ'աղօթես, դեռ կը սիրես... իսկ ե՞ս... ես...

Ամբողջ տունը սուրբ յուզումով լեցուած էր: Պզտիկներն ալ կուլային: Ժաքլինին աչքերը արդէն կանուխէն թրջուած էին... իր աղօթքներն ու յարատեւ ջանքերը վարձատրուեցան: Ուրախութեան մեծութենէն իր ամբողջ էութիւնը կը թրթռար, ի տես այն մեծ Ծնունդին, որ տեղի ունեցաւ այդ գիշեր, այդ մռայլ ու թախճատ յարկին: Եւ այդ դառնասիրտ եւ անժպիտ տիկնոջ ու իր անձնապաշտ պզտիկներուն սրտին մէջ...

Ու երբ ամբողջ տունը կը հեծկտար Աստուծոյ Հոգւոյն ներգործութեան տակ, սեւազգեստ կինը իր երեք պզտիկները առջեւը առած հեռացաւ անասուկ...

••

Ով Տէր, բացատրէ մեզի այս խօսքիդ բովանդակ նշանակութիւնը. — ...Ինքը ձեզի համար աղքատ եղաւ, Ան որ հարուստ էր որ դուք Անոր աղքատանալովը հարստանաք, եւ համոզէ մեզ սա համարին ճշմարտութիւնովը. — Երանի՜ ողորմածներուն, վասնզի անոնք ողորմութիւն պիտի գտնեն, որպէսզի, մենք՝ Քու աշակերտներդ սորվինք Քեզի պէս ուրիշները ուրախացնելու մէջ փնտոել մեր բարձրագոյն հաճոյքը:

ՍԱՄՈՒԷԼ Պ.

Լա Սիօթա



ՀԱՐՑՈՒՄՆԵՐ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԷՆ

(12—15 տարեկան պատանեաց համար)

- 1— Ո՞ր երկու գիրքերը նոյն բառով կ'սկսին, մէկը Հին իսկ միւսը Նոր Կտակարանէն:
- 2— Ի՞նչ բառով կը վերջանան Պօղոսի բոլոր (թուղթերը) նամակները:
- 3— Նոր Կտակարանին մէջ ուրիշ ո՞ր գիրքեր նոյն բառով կը վերջանան:
- 4— Ինչո՞վ կ'սկսին Պօղոսի բոլոր թուղթերը:
- 5— Մովսէսի բերնէն ելած առաջին խօսքը ի՞նչ էր:
- 6— Ո՞ր մարգարէն էր ան, որուն բերնէն ելած առաջին խօսքն էր, «Ահա հոս եմ»:
- 7— Հին Կտակարանի մէջ ո՞ւր կը գտնենք առաջին «Վա՛յ»ը, (Թուոց Գիրքէն), Նոր Կտակարանին մէջ:
- 8— Ո՞վ էր այն առաջին անձը, որուն համար ըսուած է թէ «Տէրո՛ջը առջեւ շնորհք գտաւ»:
- 9— Սուրբ Գիրքին մէջ ո՞ւր կը գտնուի առաջին «Ալէլուիա»ն (փնտոէ Սաղմոսներուն մէջ), վերջինը:
- 10— Իսրայէլացիները ամենէն առաջ «խստապարանոց» կոչողը ո՞վ էր: (Ելից Գիրքէն):
- 11— «Դրախտ» բառը ո՞ւր առաջին անգամ եւ ո՞ւր վերջին անգամ կը յիշուին Սուրբ Գրոց մէջ:
- 12— Ո՞վ էր Սուրբ Գրոց մէջ առաջին հարցումը ընողը, եւ ի՞նչ էր այդ հարցումը:
- 13— Կայէ՞ն իր եղբայրը սպաննեց, ինք իր ո՞ր մէկ ազգականէն սպաննուեցաւ:

Սիրելի պատանիներ,

Հաճեցէք Ձեր պատասխանները առաջին առթիւ զրկել ուղղակի խմբագրութեանս:

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

Գերման աւետարանականութիւնն ու հիթլերականութիւնը(1). — Ներկայիս գերման աւետարականութեան մէջ սուր հակառակութիւն մը երեւան եկած է որ հիթլերականութեան զարգացման յատկանշական մէկ դրուագը կը նկատուի

(1) Քաղուած տեղական թերթէ մը:

եւ որ կրնայ ծնունդ տալ անգարմանելի պառակտումի մը:

Պաշխոյի եւ Հիթլէրի դմի նման իշխանութիւն ունեցող կառավարութիւններ կը ձգտին խիղճերը իրենց հակակշռին տակ առնել եւ կրօնքները ստորագրասել պետութեան մասին իրենց ունեցած գաղափարին: Ասոր արդիւնքը եղած է Իտալիոյ մէջ՝ Պաշխոյի եւ Վատիկանի միջեւ այն երկար հակամարտութիւնը որ դաշինքով մը վերջ գտաւ: Միեւնոյն քանը եղաւ կաթոլիկ եկեղեցւոյն եւ Գ. Րայխին միջեւ: Խնդիրը նոյնը չէ սակայն Աւետարանականութեան համար, ուր ճիշդաւորումներու գանազանութիւնն ու ազատ քննութեան իրաւունքը աւելի դիւրութեամբ բաց կը ձգեն դոները ամէն ոտնձգութեան առջեւ: Իտալիոյ մասին հարց չի կրնար ըլլալ, քանի որ հոն զրեթէ Աւետարանական չկայ: Բայց Գերմանիոյ մէջ, ուր Աւետարանականութիւնը կարեւոր տեղ մը կը գրաւէ, ազգայնական-ընկերակցութիւնը բուռն համարձակ դիրք բռնած է անոր հանդէպ: Երկրին մէջ գոյութիւն ունեցող 29 աւետ. յարանուանութիւնները միացուցուած են եւ կազմած են այսպէս կոչուած «Գերման քրիստոնեաներու» կայսրութեան եկեղեցին, որուն ղեկավարները մեծ ազմուշով հիթլերականութեան յարած են, մինչ հակառակող փոքրամասնութիւն մը «Աւետարան եւ Եկեղեցի» անուան տակ եւ հակառակ է պետութեան միջամտութեան՝ հաւատքի մարզին մէջ:

Գերման քրիստոնեաներու մէջ կը գտնուէին մոլեռանդ հիթլերականներ, որոնց գլխաւոր առաջնորդն էր Հովիւ Քրաւուզ: Անոնք անցեալ Նոյեմբերի կիսուն անակնկալօրէն կ'որոշեն պահանջել որ Հին Կտակարանը վերցուի և Նոր Կտակարանն ալ սրբագրուի, որովհետեւ Նոր Կտակարանը Հիթլէրի մաքուր վարդապետութեան չէր համապատասխաներ: Անոնք խաչեալ Աստուծայ մը փոխարէն կ'ուզէին ունենալ տեսակ մը «նորդ»ական(1) Յիսուս, պատերազմիկ և յաղթական հերոս, Ըստ անոնց քրիստոնէական խոնարհութեան եւ քաղցրութեան տեղը պէտք է բռնէ ոյժի փառաբանութիւնը: Յետոյ՝ անոնք կը պահանջէին որ անմիջապէս արտաքսուին բոլոր ոչ-արիական հովիւները եւ նոյնիսկ հաւատացեալները, այսինքն անոնք որ ծնունդով հրեայ են բայց վերջը սպաշխարած եւ աւետարանական լեղեցիներու անդամ դարձած:

Ասիկա կը նշանակէ թէ քրիստոնէական բո-

.....

(1) Նորդ կը կոչուին հիւսիսային ցեղերը:

բոր վարդապետութիւնները կ'ուրացուէին ու կը տապալուէին, եւ անոնց տեղը կ'անցնէր արդի հեթանոսութիւն մը, հիթլերական գինանշանին տակ, որ կը յաջորդէր Քրիստոսի խաչին:

Այս յանդգնութիւնը վերջապէս մտահոգութիւն պատճառեց աւետարանական գանազաններուն: Շատ մը համոզուած նազիներ զէմ կեցան այսքան չափազանցուած յաւակնութիւններուն: Կարճ Գերման քրիստոնեաներու պետերը հրաւիրուեցան յանուն ուղղափառութեան դատապարտել նոր պառակտիչները, եւ հովիւ Քրաւուզ պաշտօնանկ եղաւ:

Սակայն զրդուութիւնը տակաւին պակասած չէ, եւ ներկայիս գերման աւետարանականութիւնը երեք հակամարտ հոսանքներու բաժնուած է. — ա) Ծայրայեղ աջակողմը կը գտնուի «Աւետարան եւ եկեղեցի» կոչուած փոքրիկ խումբը, որ կ'ուզէ կրօնքին անկախութիւնը պահպանել քաղաքական ուժին զէմ: բ) Ծայրայեղ ձախակողմը կը գտնուին հովիւ Քրաւուզի հետեւորդները, որ Հիթլէրը (Ֆիւրըրը) Քրիստոսէ վեր կը դասեն եւ կ'արհամարհեն աւանդական կրօնքը: գ) Կեդրոնը կը գտնուի գերման քրիստոնեաներու մեծամասնութիւն մը, որ լաւ ազգայնական-ընկերակցական երեւիլ կ'ուզեն, բայց կը փափաքին իրենց վարդապետութիւններուն մէջ ուղղափառ մնալ:

Վարչապետ Հիթլէր մինչեւ այսօր զգուշացած է այս կռիւին միջամտելէ. ինք անձամբ կաթոլիկ է, ուստի բաւական նեղ դրութեան մէջ կը գտնուի միջամտելու համար: Մտքերը հանդարտեցնելու համար, կառավարութիւնը յայտարարած է թէ նազի պետութիւնը ռեւէ նպատակ չունի հաւատքի վերաբերեալ խնդիրներու վրայ ճնշում բանեցնելու եւ թէ ան կը յարգէ միշտ կրօնական մտքի ազատութիւնը: Բայց այս աղատականութեան խոստովանութիւնը խնդրին էութենէն բան մը չի փոխեր: Քարը դլորուած է, հարկ է հետեւանքին սպասել:

Յ. Քրիսթֆօսէ

Rédaction du «PANPÈRE»

7, Rue Papère - MARSEILLE (France)

Le Gérant : Mr. le PASTEUR KALTENBACH

Imp. Y. ARMEN & Cie, 39 Rue St. Savournin - Marseille

ՀԱՅ ԱԿԵՏ. ԿԻՐԱՎՆՕՐԵԱՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ

(Շարածաւիջի աղօթածողովներու մասին հարցնել տեղոյն վրայ):

ՄԱՐՍԷՅԷ—Հովիւ' (Վեր.) 3. Ն. Ղազարոսեան
7 Rue Papère.

Կիր. ժամը 8. 15 ին կիրակնօրեայ դաս,
11, Rue de l'Eclipse,
13 ին քարոզածողով,
13 Rue Delille.

15 ին աղօթածողով,
11, Rue de l'Eclipse,
9. 30ին կիրակնօրեայ դպրոց մանկանց 11 Rue de l'Eclipse

Շարածաւիջի ժողովներ Սէն Լուի, Կարտանի,
Սէն ժիւլիէնի, Սէն Սեբաստիանի, Սէն Մարկի-
թի, Սէն ժերմի Պուվար Օտօի մէջ:

Սէն ԼՈՒ.—Քարոզիչ Պրն. Վահան Սահակեան,
28, Bd. Grands Pins, St. Louis

Կիր. ժամը 8ին մանկանց կիր. դաս:
9. 30ին Ս. գրական ուսումնա,
18 ին քարոզածողով:

ՍԵՆՏ ՄԱՐԿՐԻԹ.—

Կիր. ժամը 16ին աղօթածողով:

ԼԱ ՍԵՆՏ.— Քարոզիչ Պրն. Ս. Պազալեան,
24 Rue Fougasse

Կիր. ժամը 9. 30 ին աղօթածողով
Ֆրանս. եկեղեցիին մէջ
15 ին քարոզածողով,
Մանկանց կիրակնօրեայ դաս նոյն տեղը:

ԲՕՆՏ ՕՊԷՆԱՍ—Հովիւ' Պատ. Ա. Փափազեան
Pont.d'Aubenas, (Ardèche)

Կիր. ժամը 8. 30 մանկանց կիրակ. դաս
10. 15 քարոզածողով
18. 30 աղօթածողով

ՍԵՆ ՓԻԷ.—

Կիր. ժամը 10ին մանկանց կիր. դպրոց:
16. 30 ին քարոզածողով եւ
աղօթածողով:

ՄՕՆԹԷԼԻՄԱՐ.—

Կիր. ժամը 13ին մանկանց կիր. դպրոց:
14ին քարոզ եւ աղօթածողով:

ՎԱԼԱՆՍ.— Հովիւ Բրօֆ. Գ. Գ. Խայիկեան
55 Ave. Jean Jaurés Bourg les Valence
(Drôme)

Կիր. ժամը 13ին քարոզածողով Ֆրանս.
եկեղեցիին մէջ:

ԲՕՄԱՆ.—

Կիր. քարոզածողով:

ԼԻՐՍ.—Հովիւ' Պատ. Ժ. Պարսումեան,
78 Rue du Dr. Rebatel.

Կիր. ժամը 9. 45ին քարոզածողով,
5 Cours Lafayette, 8 Passage Poste.
11ին աղօթածողով նոյն տեղը:
15 ին երիտասարդութիւններու
ժողով (15 օրը անգամ մը):
18 Rue du Dr. Rebatel.

ՏԷՍԻՆ.—

Կիր. ժամը 13. 45ին քարոզածողով,
15ին աղօթածողով: Rue Wilson.

ՍԷՆ ՄՕՐԻՍ

Կիր. ժամը 10ին քարոզ եւ աղօթածողով:

ՎԻԷՆ.—

Կիր. ժամը 15ին քարոզածողով
Rue Lafayette.

ՓՕՆ ՏՐ ՇԷՐԻԻ.—

Կիր. քարոզածողով եւ աղօթածողով
(15 օրը անգամ մը):

ՍԷՆՏ ԷՔԻԷՆ.—Քարոզիչ Պրն. Ի. Արրահամեան
2. Place de la Pareille.

Կիր ժամը 10. 30ին քարոզածողով
51 Rue de la République.
17ին աղօթածողով
Արմէ տիւ Սալիի սրահին մէջ

ՍԷՆ ՇԱՄՕՆ.—

Կիր. ժամը 14ին քարոզածողով
Mairieի մէջ, Justice de la Paix սրահը.

ԲԱՐԻՋ.— Հովիւ' Պատ. Զ. Բ. Պոտաքեան,
10 bis Villa de la Gare, Vanves (Seine).

Կիր. ժամը 10 15ին քարոզածողով
135 Bd. de Sebastopol Paris 2°
Metro Régumur - St. Denis

Կիր. ժամը 15. 30ին
37 Rue Tournefort Paris 5°
Metro Mouhe Aut. K6

Ամսոյն Ա. կիրակիները երիտասարդա-
Քրիստոնէական Միութիւն

բանախօսութիւնք եւ ուսումնասիրութիւնք:

Ամսոյն Գ. կիրակիները երիտասար.

դուհեաց Քրիստոնէական Միութիւն

բանախօսութիւնք եւ ուսումնասիրութիւնք:

Ամսոյն Բ. եւ Դ. կիրակիները Սբ. Գրոց

մեկնութիւն եւ դասաւանդութիւն բոլորին համար

Կիր. ժամը 20. 30ին աղօթածողով

59 Ave. du Bas Meudon Ile St Germain

Issy les Moulineaux.

ԱԼՖՕՐՎԻԼ.— Հովիւ' Վեր. Մ. Տէր Սահակեան,
16 Bd. Carnot Alfortville

Կիր. ժամը 15. 30ին անշտանօրեայ
Rue des Brochets, Alfortville
ժամը 4ին կիր. դաս

ԵՐԳ ՄԸ ԶԱՅՆԱԳՐՈՒԱԾ

«ԲԱՆՔԵՐ»Ի ԱՄԷՆ ՄԷԿ ԹԻԻԻՆ ՄԷՋ

«Բանքեր»ի 1933 տարուան վերջին թիւին մէջ գրեցինք թէ կը փափաքէինք յառաջիկայ տարին Յունական թիւէն սկսեալ (եթէ կարելի ըլլայ) ամէն մէկ թիւի մէջ մէյմէկ ձայնագրեալ հոգեւոր երգ ղնել մանկանց սիւնակին տակ:

Գրեցինք նաեւ թէ «Բանքեր» չունի նօթայի թիփեր, բայց կրնայ 1500 ֆրանքի գումարով մը այդ անհրաժեշտ պէտքը լեցնել:

Քանի որ այդ գումարը մինչեւ այսօր եկած չէ, «Բանքեր»ի այս թիւը առանց երգի լոյս կը տեսնէ: Այսու ամենայնիւ բարոյապէս ու նաեւ նիւթապէս քաջալերող նամակներ ընդունած ենք, մեր քով գտնուած գումարը 50 Դրանքի կը հասնի: Կ'ակնկալենք որ 1500 ֆրանքը շուտով գտնուի եւ մանկանց համար մեր ունեցած փափաքը իրականանայ:

Ա՛րէ, եթէ անհատներ՝ կամ եկեղեցիներ նաեւ կիր. դպրոցներ համախմբուելով շուտով լեցնէին այս գումարը, մենք եւս նոյնքան շուտ պիտի կարենայինք հրատարակել երգերը:

Ուստի Բանքերի այս առաջին թիւը առնելուդ, սիրելի ընթերցող, հաճէ մտածել թէ այս մասին պարտականութիւն մը կ'զգա՞ս. եթէ այո, հաճէ չուշացնել:

Ընդունէ մեր սրտագին շնորհակալութիւնները սիրելի մանուկներու կողմէն
ԽՄԲ. ԲԱՆՔԵՐ»Ի

Rédaction du "PANPÈRE"
7, Rue Papère - MARSEILLE (France)

Imp. Y. ARMEN & C^{ie}
39, Rue St.-Savournin - MARSEILLE